

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 3-7

ՄԱՐՏ-ՅՈՒԼԻՍ

ԿԵ. ՏԱՐԻ 1951

ԿԱՐՄԻՐՆ ՎՈՐԳԱՆ
ԵՒ ԱՐԱՐԱԿԵՐԻ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԸ

451 ՄԱՐՏԻՍ 25 — 25 ՄԱՐՏԻՍ 1951

ԸՍՏ Ղ. ՓԱՐՊԵՑԻՈՑ

1.

«Իմ թէ ցայժմ գործեալ ինչ իցէ եւ ոչ արժանի անուան կամ դովութեան, յայտ հետէ հնարիմ ամենայն զօրութեամբ եւ ուժով — օգնականութեամբն Աստուծոյ — գործել գործ այնպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ եւ ի կայսեր Դրանն եւ յայլ ազգս պատմեցի համբաւն այն մինչեւ ցյաւիտեան» (Փարպ. 55):

Այս խօսքերով հրաժեշտ կու տար Բարձրագոյն Դրան Վարդան Մամիկոնեան, Հայոց սպարապետը. թէպէտ Յազկերտ Բ. արքայից արքայ չհասկցաւ բռնեւ իմաստը, բայց ունէին անոնք սպանական շեշտ, արտայայտութիւն մը դառնացած սրտի, առաջագրութիւն մը: Սպարապետը Աւարայրի դաշտը կը հրաւիրէր Մասանեան Բռնապետը, հանկը հրաւիրէր Մասանեան Բռնապետը, զիստես ըլլալու իր քաջագործութիւններուն...:

Յազկերտ Բ. պահանջած էր Հայաստանէն ուրանալ քրիստոնէական բարեպաշտունքն եւ ընդգրկել մոզակրօնիկ դեմը: Արթիւնն եւ ընդգրկել մոզակրօնիկ դեմը: Արտաշատի համազդային ժողովը (449) մերժած էր հետեւութիւն տալ արքայից արքայի հրամանին: Հայոց մերժողական պատասխանը ապստամբութիւն որակուած էր արքունի Դուռնէն եւ Նախարարները Տիգրան կանչուած էին պատասխանատուութեան:

Մասանեան պետութեան գլուխն ինքզինքը միանգամայն մոզական կրօնին վերին դեմակետը ընծայած էր: Ան իր խղճի պարտքը դեմացած էր իր հպատակ ժողովուրդներու ոչ զգացած էր իր հպատակ ժողովուրդներու ոչ միայն նիւթական, այլ եւ հոգեկան հոգատարութիւնը: Կը պահանջէ պետական կրօնի դաւանութիւն իր բոլոր հպատակներէն — մազդէական դեմը:

Հայաստան 230 տարիներէ ի վեր փարած էր քրիստոնէութեան. զո՞հ էր իր կրօնով: Ուստի չէր կրնար տեղի տալ յետմնաց դեմի մը: Յազկերտ կարծեց թէ սպանալիքով, հրով եւ սրով եւ քսորով կարող է նուաճել հայ ժողովուրդի կամքը, բռնարարել կրօնի ազատութիւնը, ստրկացնել Ազգը ինչպէս մարմնով, նոյնպէս հոգևով:

Նման փորձ մը փորձած էր Յակոբ Մարտիրոս Կայսր նորարոյս քրիստոնէայ Հայաստանի վրայ. բայց Հայերը զինուած ոյժին դէմ ելած էին զէնքով եւ յետս մղած հեթանոս ամբօխը: Այն ժամանակ ինքնակաց էր Հայաստան, աւելի լայն սահմաններու մէջ: Իսկ այժմ ենթարկուած, ամփոփ սահմանի մէջ, Պարսից, անօղնական արտաքուստ, թէպէտ դրացի քրիստոնէայ կայսրութեան: Բայց եւ այնպէս կը ծառանան Հայք աշխարհակալ հզօր արքայից արքայի դէմ, ոչ յաղթութեան յուսով, այլ Եկեղեցոյ ազատութեան համար մեռնելու փափագով:

Հայ Նախարարները հեռու հայրենիքէ, շրջապատուած հեթանոս ժողովուրդէ, բռնապետին անմիջական սպանալիքի տակ, կը ստիպուին կեղծա ի կեղծա տեղի տալ եւ խոնարհել իրենց գլուխը նորածագ արեգակին: Անոնք մնացին մոզակրօնիկ մինչեւ դրին իրենց ոտքը քրիստոնէայ հողին վրայ: Այդ սուրբ հողը արծարծեց անոնց մէջ նոր ոգի: Թօթափեցին մոզական հանդերձանքը. վառեցան ոգէզէն. սալերը հնչեցին ազատագրական շարժման ազգանշանը. դարբնեցաւ ապստամբութիւն: Ազատական բանակին գլուխն անցաւ Վարդան Մամիկոնեան:

Ոչ ոք կոյր էր այնքան, չտեսնելու համար, թէ Պարսկական լայնածաւալ պետութեան փոքրիկ մարզ մը չէր կրնար խիզախել յաղթութեան յուսով գլուխ բարձրացնել արքայից արքայի դէմ, որուն առջեւ հզօր կայսերութիւն մը կը պատկառէր: Հայ բանակը լսելի կ'ուզէր ընել քրիստոնէայ ժողովուրդի բողոքի ձայնը Բռնակալին: Ան հաւատացած

էր, որ յանուն քրիստոնէութեան թափուած արիւնը սերմը պիտի ըլլայ նորածին քրիստոնէութեան: Իսկ քրիստոնէական դրօշին տակ նահատակութիւնը պիտի զարդարէ նահատակներու ճակատը դափնեպսակներով:

Աւարայրի դաշտին վրայ ինքնամատոյց նահատակները արժանացան այդ պսակներուն: Անոնց զօրագլուխը՝ Վարդան Մամիկոնեան գնահատուեցաւ իր ժողովուրդէն ԿԱՐՄԻՐ¹ պատուանունով:

Բողոքի ձայնը լսելի եղաւ մինչեւ Տիգրոնի արքունիքը: Բօթարերը կը դուժէր արքայից արքայի ականջին 5000 ընտիր մարտիկներու դիմաւալ կորուստն Աւարայրի դաշտին վրայ, մէկ օրուան ճակատամարտի դոճը: Եւ մէկ եւ միւս կողմերու մարտիկները արքայից արքայի ծառաներն էին: Սթափեցաւ Բոնապետը իր դինովութենէն: Զգաց թէ կոխները, ներքին, ընտանեկան, կարող են շարունակուիլ աւելի արիւնալից: Ոչ միայն մարդպանական Հայաստանի, այլ եւ անոր սահմաններէն դուրս հայկական նահանգներու եւ քրիստոնէարեան աշխարհներու մէջ. որոնք կարող են արտաքին միջամտութեան առիթ ընծայել: Եթէ արդէն չէր հասած Կայսեր կողմէ դեսպանութիւն, խնդրելու արքային զիջողութիւնը քրիստոնէաներու հանդէպ: Ահաբեկիչ ձայներ կը հասնէին արդէն Վրկանից աշխարհէն. Հեփթաղական յառաջադրուածութիւններ...:

Հարկադրուեցաւ Յագկերտ հասցնել Հայաստան, Վրաստան եւ Աղուանք թողութեան հրովարտակ, որ թոյլ կու տար այդ աշխարհներուն շարունակել ապրիլ քրիստոնէարար, իր հպատակութեան տակ:

Հայաստան տարած էր յաղթութիւնը:

Կարմիր Վարդանի քաջագործութիւնն էր ան: Իր համբաւը կը հնչէ 1500 տարիներէ ի վեր ամէն հայու շրթունքէն: Իրաւամբ տօնած է հայ ժողովուրդը Աւարայրի Հերոսին յիշատակը իբրեւ Ազգային Տօն: Իսկ Կարմիր Վարդանի ոգին ներշնչած է եւ կը ներշնչէ հայ սրտերուն կորով, յոյս եւ յարատեւութիւն:

**

¹ Առաջին անգամ Սեբեոս պատմագիր (660) կը յիշէ Վարդանը այս տիպարով (էջ 22):

2.

ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ
ա. Ղազար Փարպեցի:

Ղազար Փարպեցւոյ Պատմութիւնն Հայոց (տպ. Տիգրիս 1904), միակ աղբիւրն է 449—485 շրջանին Հայաստան տեղի ունեցած քաղաքական-կրօնական իրադարձութիւններուն: Երկու մասէ կը բաղկանայ այն, Վարդանանց եւ Վահանանց պատերազմներու պատմութիւնը: Առաջնոյն համար բերանացի աղբիւր ունեցած է մամուլը որպէս Արշալիր Կամսարականն, երկրորդին համար՝ Ներսէս Կամսարականը. այս Բ. շրջանի ղէպերուն ժամանակակից էր ինքը:

Փարպեցի իրեն հաղորդուած տեղեկութիւնները տուած է հաւատարմարար եւ սքանչելի կարգաբանութեամբ. հետեւած է դիպաց ժամանակագրական ընթացքին: Ան գիտակից է պատմագրի պարտականութիւններուն. «զի ոչ փոքր ինչ կասկած է աներկիւղ այսպէս ուժեք տալ զանձն յայսպիսի վաստակս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն՝ բերել պատկառելով ստուգութիւն անպարտաւ յականջս իմաստասէր յողաց. չյաւելուլ զանեղեպսի՝ յընդունայն անմուսն բանից. չնուազեցուցանել զեղեպսն եւ կարճակտուր պատմել բանիւ անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն» (էջ 6): Եւ ան զրի առած է պատմական իրողութիւնները այնպէս ինչպէս տեսած եւ լսած է, ամենայն անկողմնապահութեամբ: Որովհետեւ իր գլխաւոր տեղեկատուն էր Արշալիր Կամսարական, փեսան եւ նիգակակիցն Վարդան Մամիկոնեանի, այս պատմութեան մէջ առաւելագէտ Վարդանի եւ Արշալիրի ուշադրութիւն զարձուած, հեղինակին համակրութիւնը մեծ չափով Մամիկոնեանց միտած ըլլայ, մանաւանդ երբ նկատի առնենք, որ իր մեկենասն ալ, Վահան զօրավար եւ մարդպան, նոյն տոճմէ էր: Միւս կողմէ պատմութեան ականաւոր հերոսն ալ Վարդանն էր:

Պատմութեան միւս կարեւոր ղէպքն ալ Վասակ Սիւնեաց տէրն եւ Հայոց մարզպանն էր, որուն հսկողութեան տակ էր մարզպանական Հայաստանը: Փարպեցի հոգ տարած

է տալ անկողմնապահութեամբ անոր ալ դերը ազատագրական շարժման մէջ: Մինչ Վարդան իբրեւ զօրավար իր գունդով Աղուանքի եւ Արտաղի մէջ կը դիմադրուէ սասանեան բանակին, Վասակ միջնաշխարհի պաշտպանութիւնը յանձն կ'առնէ: Բարեբախտարար Աւարայրի կուռն էաքը Յագկերտ Բ. կը զգաստանայ. եւ վերջ կու տայ ներքին կռուին, այնու որ թողութեան հրովարտակով ապստամբներուն անյիշաչարութիւն կը խոստանայ: Բայց կ'առնէ Վասակէն մարզպանութիւնը եւ ապա Սիւնեաց տանուտէրութիւնը:

Իրաց այս պատկերը, զոր զձած է Փարպեցի, սղտորուած է ապա եկամուտ տարրներով, որոնք ուշ ժամանակէ են, հաւանորէն այն ձեռքէն, որ յերկրած է յանուն Ղազար Փարպեցւոյ, անոր Պատմութեան սկիզբը գետեղուած Նախերգանքը (էջ 1—38): Այդ ձեռքը եղած ըլլայ թերեւս նաեւ Եղիշէի 570—578 տարիներու, երկրորդ Վարդանանց Պատմութեան այժմեան Օրինակի խմբագիրը: Թէ հոս եւ թէ հոն Վասակ Սիւնի ներկայացուած է «նենդաւոր», «չարախորհուրդ» եւ այլ համազօր վերադիրներով: Թէ այդ տարրերը Փարպեցւոյ Պատմութեան մէջ եկամուտ են, ցոյց կու տան անոնց ներքին նկարագիրը եւ արտաքին տեսքը, որոնք անմիասնական են Փարպեցւոյ ոգւոյն եւ ոճին, եւ գետեղուած են անոր Պատմութեան մէջ անյարիր կապակցութեամբ: Դժբախտարար շատ ուշ անդրադարձայ այս իրողութեան. այլազգ ուրիշ կերպով պիտի մեկնուէր Փարպեցւոյ եւ Եղիշէի աղբիւրը իրարու հետ, մանաւանդ այն շէի աղբիւրը իրարու հետ, Պատմագրութիւններս իրարու մէջ, ուր երկու Պատմագրութիւններս իրարու հետ սերտ յարաբերութեան մէջ կը գտնուէին: Այդ տեղիքները այժմ կը տեսնուի թէ անհարազատ ըլլալով Փարպեցւոյ, խմբագրի խառնարանէն յառաջադրած արդիւնքներ են թէ մէկուն եւ թէ միւսին մէջ. ուստի եւ չեն փոխառութիւններ Ղ. Փարպեցիէն, ինչպէս համարած էր ուրիշներու հետ:

Այս ներմուծուածքները (interpolation) մի առ մի քննութեան պիտի առնեմ այս տեղ, որպէս զի չխանդարեն անոնք ապա մեր պատմական տեսութիւնը Կարմիր Վարդանի պատերազմական գործածութեանց եւ ազատագրական շարժման մասին:

Ուրիշ տեղւոյ կը վերապահեմ Փարպեց-

ւոյ Պատմութեան սկիզբը գետեղուած Նախերգանքի քննութիւնը:

Ա. հատուած:

Աղուանից ազատները լուր կ'ուղարկեն Հայոց Բանակին, թէ Միհրնեսէ հազարապետ եկած է Փայտակարան եւ զօրք կը հաւաքէ եւ մտադիր է «ընդ Աղուանս արձակել ի Հայս»: Հայ բանակը ամբարնոցէն կ'իջնայ յԱյրարատ գաւառ:

«Եւ արդ եկեալք յԱյրարատ գաւառ եւ զայս համբաւ լուեալ ի կողմանցն Աղուանից՝ ստիպէր գերանելի սպարապետն Հայոց Վարդան, գտէրն Մամիկոնից, իշխանն Սիւնեաց Վասակ՝ գնալ պատահել նոցա գնդաւ. եւ զինքն մնացուցանէր անդէն պատճառանօք ասելով, թէ ես աստէն պատրաստիմ. դուցէ, ասէր, այլ ինչ խնայեալ չարախորհուրդն Միհրնեսէ՝ գործից ընդ մեզ: Այլ ինքն Վասակ զխաբէութեան քաղաքարին կազմեալ նիւթէր ի սրտի իւրում, ունելով կամակիցս եւ այլ աստուածանեմզ արս խորհրդոցն իւրոց՝ յազատացն Հայոց:

Իսկ երանելի սպարապետն Հայոց, տէրն Մամիկոնից Վարդան, ասէր ցիշխանն Սիւնեաց Վասակ, թէ Որպէս անաք զմտաւ՝ պարտ է մեզ նախ զորս առաքեմքն առ Կայսր՝ արձակել, եւ ապա զոր ինչ հրամայեցես ինձ՝ առնեմ անխափան: Եւ նորա յազագս նեպով զիւր առաջի եղեալ զխորհուրդն կատարելոյ՝ յանձն իւր առնոյր զասացեալսն յերանելի սպարապետէն ի Վարդանայ կատարել: Եւ վաղվազակի նամականի արարեալ առ Կայսր...» (63):

Կանխաւ որոշուած էր ապստամբութեան ծրագիրը: Միաբանած էին նախարարները ինդրել Կայսեր եւ արտաքոյ մարզպանական Հայաստանի գտնուող Մեծ Հայոց նահանգներու օգնութիւնը: Վարդան կը պահանջէ, որ այս որոշմանց համաձայն նախ պատգամաւորներ ուղարկուին Կայսեր եւ այլ նահանգապետներու: Եւ Վասակ Հայոց մարզպան յանձն կ'առնէ զրել թղթեր իր եւ այլ նախարարներու կնիքներով: Պատգամաւորներն կամ Դեսպանները կ'ընտրուին. եւ կը մեկնին թղթերով: Իր կարգին նաեւ Վարդան իր գունդով ճանապարհ կ'ելլէ: Ինչպէս կ'երեւայ իրեն յանձնուած էր բանակցութիւն վարել Հոնաց հետ: Նկատի առնելով այս ամէնը, ինչպէս կարելի է մտածել, թէ Վասակ եւ այլ աստուածանեմզ մարդիկ ուրիշ

1*



ապա նենգաւորն վասակ տայ տանել գողայսն առ քագաւորն Պարսից: Եւ որք խոտորեցան զկնի սատանայի ընդ ուխտանեցիկն վասակայ, եւ այսոքիկ:

- Իշխանն Բագրատունեաց Տիրոց
- „ Խորխոռունեաց Գաղիշայ
- „ Ապահունեաց Մանէն
- „ Վահեւունեաց Գիւտ
- „ Պալունեաց Վարազշապուհ
- „ Աբեղեմից Արտէն
- „ Ուռծայ Ներսէս

Եւ այլք յաստակաց եւ սեպուեի ումանի յիւրաքանչիւր տոհմէ:

Եւ լուեալ գայս ամենայն գործ աղէտից, գոր էր գործեալ նենգաւոր իշխան(ի)ն Սիւնեաց վասակ(այ) եւ այլ նախարարացն որ ընդ նմա, երանելոյ սպարապետին Հայոց տեսան վարդանայ, հանդերձ նախարարօքն եւ գորուն որ ընդ նմայն էին, չտրամել ոչ կարէին. եւ գանձինս եւ զգերեալ տղայսն ի պահպանութիւն ամենախնար աջայն յանձն արարեալ նուիրէին...: Եւ ասացեալ գայս երանելոյն (էջ 66, տ. 36—67, տ. 30): Կը շարունակուի. «(Ապա) շուեցին միարան ամենեքեան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց ի գաւառն Այրարատոյ...» (67, 30—37):

Փոխանակ Աղուանից աշխարհէն Այրարատ յաղթութեան աւետիք նօթճելու, Այրարատէն գուժեր կը հասնին յաղթականներուն. այս երկրորդ անգամ. դարձեալ նոյն յանկերգը: Այս անգամ կ'ըսուի թէ վասակ Մամիկոնեաններու եւ Կամսարականներու, ինչպէս նաեւ այլ նախարարներու որդիքը հաւաքած Սիւնեաց բերդերու մէջ գետեղած է եւ անկէ ալ առ Յաղկերտ ուղարկած է: Նոյնը կը կրկնուի յետոյ (էջ 77, տ. 40) թէ վասակ յետ Աւարայրի ճակատին եւ թողութեան հրովարտակին, երբ Ս. Քահանայք եւ կապեալ նախարարները ի Գուռն կը տարուին, «ընդ նոսին եւ ի տոհմէն Մամիկոնէից եւ Կամսարականաց եւ յայլ ազգաց գողայ մանկունսն ապստամբացն, զորս նախագոյն տարեալ նենգաւորին կացուցանէր առաջի հազարապետին Միհրնեբուհի եւ այլ աւագանւոյ գրանն» (էջ 77, 40—78, 2): Կ'ըսուի նաեւ, թէ երբ նախարարները բանաարկութեան վճիռը կ'ընդունին, թագաւորը «պողայսն եւ

ըմանկունսն ի տոհմէ Մամիկոնէից եւ Կամսարականացն եւ որք յայլ տոհմէ, հրամայէր անորինն Միհրնեբուհի տալ ի բաց ուժ եւ կամեցի» (82, 8—10): Այս տղաքը ապա Աշուշայ կը յաջողի ստանալ եւ յանձնել իրենց մայրերու. Փարպեցին կը գրէ. «Եւ զմնացեալ դեռ եւս ի տղայութեան հասակի զորդիս նահատակելոցն ընդ սրբոյն Վարդանայ, որք ի նոյն տոհմէ Մամիկոնէիցն էին եւ կամ որք ի տոհմէ Կամսարականացն եւ կամ յայլ ազգաց» (110, 28—32):

Կարելի չէ մտածել թէ վասակ 450 տարւոյն, երբ Վարդան Աղուանից աշխարհէն մէջ զրաղած էր, Հոնաց հետ բանակցած եւ անոնց օգնութիւնը ապահոված, նման քայլ մը առած ըլլար. միւս կողմէ դեռ չէին վերագործած դեսպանները Կ. Պոլսէն: Փարպեցի, որ իր պատմութիւնը կը գրէ «ըստ կարգին», այսինքն ժամանակագրորէն, չէր կրնար կանխել ըսել թէ «եւ ապա նենգաւորն վասակ տայ տանել գողայսն առ թագաւորն Պարսից»: Ինչպէս ապստամբ նախարարներու եւ Ս. Քահանայից կալանաւորութիւնն եւ ի Գուռն առաքումը Ատորմիկոյ մարդպանէ եղաւ, նոյնպէս տղայոց հաւաքումն եւ առաքումը նոյնին հրամանով պէտք է եղած ըլլան: 451 Յունիսէն ետքը երկիրն իշխանութիւնը յանձնուած էր Ատորմիկոյի եւ վասակ զրկուած էր ամէն գործառնութենէ:

Եթէ նման անցքեր անցած ըլլային Վարդանի բացակայութեան ժամանակ, վերագործին բողոք բարձած պիտի ըլլային, Վարդան իր եղբորորդւոց եւ Արշաւիր Կամսարական եւ այլք իրենց որդւոց մասին, եւ անոնք պիտի չկարենային գոհ սրտով «կատարել գոտնն զատկի առ ընտանիս իւրեանց»:

Նոյնպէս անոնք չնկատեցին մեծ փոփոխութիւն երկրին ներքին կացութեան մէջ: Ուստի շատ կասկածելի է ուխտանեղ նախարարներու ցանկը, զոր ունինք այս հատուածին մէջ:

Այս ցանկին մէջ առաջին տեղին ունի իշխանն Բագրատունեաց Տիրոց: Ինչպէս տոհմը, նոյնպէս անունը Փարպեցւոյ քով առաջին անգամ հոս երեւան կու գայ. իշխանս ինք զինքը չէր ցուցուցած Արտաշատի ժողովին մէջ, նոյնպէս չէր ընկերացած ի Գուռն կոչուած նախարարներուն. որ եւ է մասնակցութիւն չէ բերած 450—451 տարի-

ներու կռիւներու մէջ: Այս տոհմէն միակ անձը, որ կը յիշուի Ե. դարու պատմութեան մէջ, է Սահակ Բագրատունի սասկետ, որ այնքան արիարար մասնակցեցաւ Վահանեանց կռիւներուն (Փարպ. 121—141): Բագրատունիները է. դարէն ետքը հրապարակ ելան իրրեւ մրցակիցներ Մամիկոնեանց: Այս տեղ ալ նոյն դիրքի մէջ են:

Իշխանն Խորխոռունեաց Գաղիշայ. Արտաշատի ժողովին մէջ խորխոռունեաց տէրն էր Վրիւ մաղխազ (Փ. 45), որ 444ին ալ ներկայ գտնուած էր Շահապիվանի ժողովին. կ'երեւայ թէ իր ծերութեան պատճառաւ որդին Գաղիշայ եղած է իր տոհմին ներկայացուցիչն ի Տիգրան (Փ. 47): Փարպեցի կը գրէ թէ Գիւտ կաթողիկոս «առ վատթարս ունէր եւ արհամարհէր զՄաղխազն Գաղիշայ, որ զօրագլուխն եւ քաջալերիչն էր ամենայն ամբարշտելոցն դասու» (113). ուստի 451էն ետքը. սա ապա կալանաւորուեցաւ Վահանեաններէ (121):

Իշխանն Ապահունեաց Մանէն կը յիշուի Փ. 45, 47:

Իշխանն Վահեւունեաց Գիւտ կը յիշուի Փ. 45, 47, որ ուխտապահներու թուին մէջ էր եւ մասնակցած Վարդանի Աղուանից արշաւանքին (Փ. 64), թէ եւ չի յիշուիր երկրորդ ցանկին մէջ (էջ 65):

Իշխանն Պալունեաց Վարազշապուհ ներկայ էր Արտաշատի ժողովին (Փ. 45): Իրրեւ ուխտանեղ կը յիշուի նաեւ էջ 73, որպէս թէ Ատորմիկոյ կարգած ըլլայ զինքը գունդի մը գորագլուխ, որ պիտի արշաւէր ի Տայս: Տես վարը:

Իշխանն Աբեղեմից Արտէն: Արտաշատի ժողովին մէջ Աբեղեմից տէրն էր Գաղբիկ (45), որ ապա իրրեւ դեսպան ուղարկուեցաւ Վարդանին (58): Հաւանորէն սխալմամբ Աբեղեան կոչուած է հոս Արտէն, որ յետոյ իրրեւ ուխտանեղ յիշուած է «Արտէն Գաբեղեան» եւ կարգուած է կ'ըսուի Ատորմիկոյէն զօրագլուխ գնդի մը որ պիտի արշաւէր ի Տայս (էջ 73):

Իշխանն Ուռծայ Ներսէս. այս Ներսէս հաւանորէն նոյն է Ուրծացի Վարազներսէսի հետ, որ, ինչպէս Փարպեցի կը գրէ, ուխտապահներու թուին մէջ էր նախ. «Սեպուհ տապահներու թուին մէջ էր նախ. «Սեպուհ մի Ուրծացի, որում անուն էր Վարազներմի Ուրծացի, որում անուն էր Վարազներմի սեհ, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ, որ էր յերգմանն ընդ նախարարսն Հայոց (վա-

հանանց), նենգեալ ուխտին սրբոյ՝ երթեալ աւերէր զհահատանն Բռնավիթի» (էջ 121):

Այս պատկերէն կը տեսնուի, թէ խմբագիրը ցանկս կազմած է այնպիսի անուններէ, որոնք որ եւ է ժամանակ Մամիկոնեանց անհաւատարիմ գտնուած են:

Ե. հատուած: Վարդան իր գնդով կը ձմերէ յԱյրարատեան գաւառի. «Իսկ նենգաւոր իշխանն Սիւնեաց վասակ ոչ երբեք զաղարէր գրել նամականի առ իշխանս եւ շինականս եւ քահանայս աշխարհիս Հայոց. ցուցանէր իմն բերեալս ի Գրանէ ուխտս սուտս եւ վկայութիւնս ընդունայնս, թէ Արքայից արքայ զԳրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի. եւ զվնաս կոտորածի մոզուցն յՍնդրէ. եւ զպատամբութեան ասէ, թէ Բնա եւ յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ եւ ի բանից վարդանայ եւ մի կորնչիք ընդ նմա: Եւ զինքնէ գրէ ուխտանեցն վասակ, թէ ես լինիմ միջնորդ այսմ ամենայնի. եւ անվնաս պահեմ զաշխարհս Հայոց: Եւ տուեալ ի ձեռս սուտ քահանայից գրեալսն նենգաւորին վասակայ: Որոց անուանին եւ չքահանայիցն այս. Զանգակ մի ոմն Սահակ Չայնոզ եւ միւս ոմն Պետրոս Երկաթի. եւ էին Սահակն եւ Պետրոսն ի գաւառէն Սիւնեաց: Յորոց ձեռս տայր, գաղտ յերանելի սպարապետէն վարդանայ, նենգաւորն վասակ գրեալսն շրջեցուցանել ընդ աշխարհս Հայոց: Զոր լուեալ թուլացելոցն ի հաւատս եւ անյուսիցն՝ հաւատացեալ բանից նենգաւորին կորնչէին: Իսկ պինդն եւ մարտիրոսութեան տենչոզն իբրեւ յսէին գայս ամենայն բանս ցնորից՝ եւս առաւել պնդեալք գորանային եւ աւուր աւետաբեր փրկութեան իւրեանց սպասէին յուսով» (67, 38—68, 14):

Հատուածիս շարադրութեան տկար կողմերը նկատել կը թողում ընթերցողներուս: Բնագիրը թերոյթ մը կը ցուցնէ «Զանգակ մի ոմն Սահակ Չայնոզ...» պարբերութեան մէջ, այս տեղիքը եղիչէ ունի. «Երէց մի Զանգակ անուն, երէց մի Պետրոս անուն, սարկաւազ մի Սահակ անուն» (էջ 71):

Հոս թողութեան հրովարտակի մը մասին խօսք կ'ըլլայ. հրովարտակը սակայն գոյութիւն չունի. վասակ լոկ «ցուցանէր իմն բերեալս ի Գրանէ ուխտս սուտս... թէ Արքայից արքայ զԳրիստոնէութիւն շնորհեաց

աշխարհի. եւ զմնաս կոտորածի մոռուցն չի՛նդրէ» . չեն յիշուիր Սաղիսաղի կռիւն եւ ճորայ պահակապաններու կոտորածն եւն : Այս առաջին հարուածէ՞ն ցնցուեցաւ Յագ-կերտ : Բայց թողունք այս կէտը : Եւ արդէն հատուածիս հեղինակը չի հաւատար թէ նման հրովարտակ մը հրատարակուած ըլլայ :

Թողութեան հրովարտակի մասին այս խօսքերը ակամայ կը յիշեցնեն 571 տարւոյ Հայոց ապստամբութեան առաջին տարւոյն Խոսրով Ա. ի հրապարակ հանած թողութեան հրովարտակը . որուն մասին Եղիշէ երկար խօսած է եւ նաեւ Վասակի, Զանգակի, Սահակի եւ Պետրոսի անունները յիշած : Ուստի եթէ Յագկերտ 450ին նման հրովարտակ մը չէ հրատարակած, բայց ճիշդ է, որ 571ին Խոսրով Ա. շրջաբերութեան մէջ գրած է զայն : Հատուածիս խմբագիրը Եղիշէի ազդեցութեան տակ է :

2. հատուած :

Խմբագրին ջանքն էր ցոյց տալ թէ Վասակ ինչպէս ինքզինքը, նոյնպէս ուրիշ նախարարներ, սեպուհներ, ոստանիկներ, շինականներ եւ ուսմիկ մարդիկ հեռացուցած է սուրբ ուխտէն, այսինքն Վարդանաներէն, եւ կազմած է անոնցմէ գունդեր, որոնք անցնելով Պարսից կողմ կուտան են Հայոց դէմ : Յայտնապէս չէ խոստովանած սակայն իր գիտաւորութիւնը . բայց հետեւեալ տեղիքները կ'ենթադրեն Պարսից նիզակակից Սիւնի գունդեր .

ա. Երբ Վարդան Աւարայրի դաշտին վրայ ճակատ կը յարգարէր, կ'ըսուի թէ «յայն(մ) կողմանէ (պարսկական ճակատէն) առաւելապէս երեւեր զակիշ գնդին Սիւնի գորուն եւ այլ գորաւոր արանց (գորավարաց) նշանք դրօշիցն» (72) :

բ. Պատերազմէն ետքը Երբ Ատրորմիզդ մարզպան Թողութեան հրովարտակը կը ծանուցանէր եւ փախտականներուն յորդոր կը կարգար աներկիւզ դառնալ իրենց տուները, կ'ըսուի շատ անկապ շարագրութեամբ . «Որք ի համբան խնդութեամբ ի Պարսից եւ ի Սիւնեաց ժողովեցան ամենեքեան : Սա (Ատրորմիզդ) եւ ի վերայ ժողովելոցն առ երանելին Հմայեակ յամուրսն Տայոց գունդ կազմէր այրբնոիր բազմութեամբ ի Պարսից եւ ի Սիւնեաց . եւ յերկուս բաժանեալ գգունդն՝ կարգէր նոցա գորագլուխս գԱրտէն Գաբեդեան եւ գՎարազշապուհ Պալունի» (73) :

Նոյնը կը կրկնուի . «Եւ լուեալ Ատրորմիզդին մարզպանին Հայոց գայնչափ լաւ արանց գժախս ի գնդէն Պարսից եւ Սիւնեաց» (75) : Այս Գաբեդեան եւ Պալունի սեպուհները, ինչպէս տեսանք, խմբագիրը յիշած էր ուխտանդներու թուին մէջ :

է. հատուած . տեղափոխուած :

Փարպեցի էջ 73 կը գրէ թէ Ատրորմիզդ մարզպան «ի վերայ ժողովելոցն առ երանելին Հմայեակ (կարդա՛ւ առ երանելոյն Հմայեկայ) յամուրսն Տայոց գունդ կազմէր այրբնոիր բազմութեամբ ի Պարսից եւ ի Սիւնեաց եւ յերկուս բաժանեալ գգունդն՝ կարգէր նոցա գորագլուխս գԱրտէն Գաբեդեան եւ գՎարազշապուհ Պալունի : Գանգի բազմութիւն փախտուիցն Հայոց, նախարարք եւ սեպուհք, ոստանիկք եւ ուսմիկք, դիմեալ ի յերկիրն Տայոց՝ ժողովելին առ Հմայեակ եղբայր սրբոյ գորավարին Վարդանայ, որ էր յամեալ յաշխարհին Յունաց, խնդրել գորս ի թագաւորէն, ըստ յառաջագոյն գրելոցն ի կարգի :

Որք երթեալք յանդիման եղեն թագաւորին Թէոդոսի . . . Եւ մինչ զեռ յապաղեալ էր զրոյց պատասխանոյն այսպէս՝ հասեալ գործ պատերազմին Հայոց եւ Պարսից կատարէր : Եւ տանուտեարքն Հայոց եւ նախարարք, որք երթեալն էին յաշխարհն Յունաց իրրեւ տեսին, թէ ոչինչ օգտեցան յազազս որոյ աշխատն եղեն, դարձան եւ . . . եւ ոչ ժամանեալ ի գործ ժամու պատերազմին՝ առ վայր մի առ լերամբն որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւնն Խաղտեաց, ամբողջն տեղի մի գտեալ դադարեցին . քէ ո՛րպէս առաջիկայ իրացն մարքացեան պատրաստել :

Յորոց վերայ տեղեակ առաջնորդօք եկեալ գցալցն, եւ ընդ ծագել առաւօտուն պատրաստքն զինուք անկանէին ի վերայ այնց նորին ընկերաց Հմայեկայ Մամիկոնէի ի գիւղն որ անուանի Որջնեաղ, ի գաւառին Տայոց . քանզի ի ժամուն իջեալ էին ի յամրոցացն լերինն Պարխարայ . արք փախտուիցն քեպով յիւրաքանչիւր երկվարս հասանէին : Ումանք մերկանդամք եւ ումանք զինեալք հարկանէին ի գորացն Պարսից . եւ դարձուցեալ ընդ կրունկն՝ անդէն փախտուականս առնէին . յորոց գրագումս անդէն ի շինամիջին եւ գայլս ի մէջ այգեստանոյն յերկիր կործանէին : Անդ կլատարելութեան պսակն ընդունէր, գոր

երանելի սեպուհն Հմայեակ փափագանօք եւ բազում ցանկութեամբ խնդրէր՝ ժամանել զկնի աւրբ եղբորն իւրոյ, եւ վաղվաղակի լսելի լինէր . զի հայեցեալ Աստուծոյ ի փափագ առնն՝ կատարէր զհայցուածսն եւ պսակէր գտուրքն :

Իսկ գորն ուխտապահացն, որք առ սրբոյն Հմայեկի ժողովեալ էին, իբրեւ տեսանէին զիսն՝ ի սուգ մեծ մտեալ ի վայր կործանէին, չունելով ամենեւին յոյս մխիթարութեան . այլ անձամբ անձին այր իւրաքանչիւր զվնիս վատ մահու եւ չարաչար կորստեանն կատարեալ տեսանէր : Զարհուրեալք անդէն ի վեր ի լեռն դառնային ի Պարխար, հայրայրացն իսն առ չարի եւ սուգ պատմառանց մեծի եւ ահաւոր հասելոյ տրտմութեան հաշուէին :

Եւ լուեալ Ատրորմիզդին մարզպանին Հայոց գայնչափ լաւ արանց գժախս ի գնդէն Պարսից եւ Սիւնեաց, քէպէտ եւ սաստիկ տրտմութեամբ խռովէր, այլ յորժամ լսէր զվախման հրաժարելոցն սրբոյն Վարդանայ եւ Հմայեկի՝ մխիթարեալ ուրախանայր մեծապէս, քանաչելով զբարձումն սպառ սպառ քաջ գորավարացն» (73, 32—75, 10) :

Տեղիքը «ըստ յառաջագոյն գրելոցն ի կարգի» կը յայտնէ մեղի, թէ էջ 73, 39—74, տուածը նախնարար գետեղուած էր էջ 63, տ. 41 իբրեւ շարունակութիւն զեպանազնացութեան յիշատակութեան, ինչպէս այլուր (Աւետիք, 1942, էջ 68—71) ուշադիր ըրած էի : Թէ ո՞վ է, որ այդ հատուածը հոս զետեղած է, չեմ կրնար ըսել . բայց թէ անհարազատ է տեղւոյս, զգալի է :

Ինչպէս էջ 73, 32—39, նոյնպէս էջ 74, տ. 24—75, 10 երկրորդ ձեռքէ յերկրուած կ'երեւայ, ուշ ժամանակ մը : Յամենայն դէպս Փարպեցւոյ գրչէն չէ այն : Բովանդակութեամբ ալ չի ներկայացներ պատմական զէպք մը : Շատախօս խմբագրողի մը տարտամ մտքի ստեղծագործութիւնն է այն :

Դեպքանները Վահան Ամատունի, Հմայեակ Մամիկոնեան եւ Մեհրուբան Արծրունի վերադարձին «առ լերամբն որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւնն Խաղտեաց, ամբողջն տեղի մի գտեալ դադարեցին» : Այդ տեղին պէտք է ամբողջ մը եղած ըլլայ, հոռոճական հողի վրայ : Ամբողջն աւելունք չէ յիշուած : Յետագայ տեղեկութիւն-

ներու համաձայն այդ ամբողջն իջնալով կը հասնին ամրականք «ի գիւղն որ անուանի Որջնեաղ ի գաւառին < Արեւաց փոր, ի նահանգին > Տայոց» (հմմտ. Հիւրճման, Տեղւոյ անուններ, 117 եւ 245) :

Եթէ տեղեկութիւններս Փարպեցւոյ գրչէն ըլլար, պիտի յուսայինք, որ ան առանց յիշատակութեան չթողուր նախ, թէ Հմայեակ Մամիկոնեան ի Տայոս հանդիպեցաւ իր որդւոյն «անուն Վարդ, որ էր մնացեալ աղայ ի (ա՞ն) դայեակս իւր ի Տայոս» (Փարպ. 111), երբ իր միւս որդիք ի Դուռն տարուեցան (որոնց ապա միացաւ եւ ինքն Վարդ, Փարպ. 120) . երկրորդ թէ ի՞նչ բախտ ունեցան Վահան Ամատունի եւ յատկապէս Մեհրուբան Արծրունի : Դարձեալ որ եւ է խօսք չէ ըրած, թէ ի Տայոս կամ ի Պարխար փախտականներ հասած եւ Հմայեակի խումբին միացած ըլլան : Այսպէս ունինք կուտաններ կասկածելու Ատրորմիզդ մարզպանի ի Տայոս ստաքած գունդի մասին, որ գիշերախառն կը թափանցէ մինչեւ Որջնեաղ, այն տեղ առաւօտեան դէմ կը պատահի լեռնէն իջած Հմայեակի զօրաց, յանկարծակիի կը բերէ զանոնք, բայց ապա անոնցմէ դիմադրութիւն կը կրէ եւ յետո կը մղուի մեծ կոտորածով : Այս դուպարածին է որ կը նահատակուի Հմայեակ :

Նոյն գրչէն է նաեւ Եղիշէի Պատմութեան մէջ Հմայեակ Մամիկոնեանի նահատակութեան յիշատակութիւնը : Չեմ տարակուսիր թէ հատուածիս խմբագիրը աչքի առաջ ունեցած է այն վկայարանութիւնը Հմայեակ Մամիկոնեանի, զոր կը յիշէ Թ. դարու առաջին քառորդին Ահարոն Վանանդացի Նունէի Սիւնի Պատմութեան մէջ :

Ը. հատուած :

Ատրորմիզդ մարզպան Թողութեան հրովարտակը ծանուցանելէ ետքը կ'ըսուի . «Խարհուրդ ի մէջ առեալ (խմացիր՝ Ատրորմիզդի), քէ որպէս հնարեսցին որսալ զարսն փախտականս առանց Արեւաց (արեւօն) կուտոյ եւ ըմբռնել ըստ կամաց (°) եւ ի հարկատրութեան կացուցանել զաշխարհս Հայոց . . . եւ այսպէս նեկգով նուանեալ զմարդիկն՝ կալաւ գամենետեան եւ տայր խաղացուցանել ի Դուռն Արեւացն .

գիշխանն մեծ Արծրունեաց գնեղապուհ եւ . . . տանն Ամատունեաց
 „ „ տանն Վանանդեայ
 „ „

Արչաւեր իբրեւ դատախազ չէ ներկայացած. ան զգուշացած է «աւելորդ խօսքերէ եւ շատխօսութենէ».

ԺԳ. Հատուած:

Իսկ ողորմելի ուխտադրուծն վասակ քէպէտ եւ կամէր խօսել ինչ եւ տալ պատասխանի, չդնէր ոք բնաւ ունկն բանից եւ կամ այնորժէր. վասն զի ուխտանեկուքիւնն սրբոյ Աւետարանին եւ բանն անիծից երանելոյն առն Աստուծոյ Ղեւոնդի եկեալ հասնել ի վերայ նորա՝ պատեալ փակեալ պաշարեցին զնա: Որ քէպէտ եւ կայր ինչ վաստակս (°) առնն առ Պարսիկս եւ ջանայր ցուցանել ի ժամուն, եւ այն ոչինչ էր օգուտ, այլ առաւել եւս ի դատախազութիւն եղեալ վնասէին նմա: Եւ կատարէր սն նա բան Սաղմոսերգին, քէ Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապարտեալ. եւ աղօթք նորա ի մեղս դարձցին: Հրաման տայր թագաւորն Յագկերտ անդէն զառաջեաւ կողոպտել ի նմանէ թշնամանօք զամենայն պատիւն գոր ունէր: Եւ նեկուարն վասակ կացեալ ի Դրանն ամսինչ կարի վշտագին եւ նեղութեամբ բազմաւ մաշէր գաւուրս իւր հառաչելով եւ յոգւոց հանելով զամենայն օր եւ զժամ. մինչեւ թշնամանակեպս ձաղանօք սփռեալ գթաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծեծէր գդէմն, ասելով. Ահա ընկալ գայս ձաղաս (ձաղա°նս), ասէր, զոր ետ բերել քեզ ուխտանեկուքիւնն սրբոյ Աւետարանին եւ արիւն նահատակութեան սրբոյն վարդանայ Մամիկոնի եւ այլոցն ցանկալի հաղորդելոցն ընդ նմա, որոց ժառանգեալ գլխաւորեցի կեանսն՝ ընկալան զանուն բարի յերկրի եւ անանց ազգաց յազգս իւրեանց: Իսկ դու, ասէ, մեղաւոր անն իմ, կեաս խղիւ եւ ցաւովք մտաց զակաւաթիւ գաւուրս կեցցադոյս. եւ պատրաստեալ պահիս մշտնջեմաւոր եւ անանց գեհեհին: Եւ զայսպիսի բանս հառաչանաց նորա եւ յալոյ մինչեւ յօր մահուան իւրոյ՝ խօսէին ընդ մեզ գայս (°) արդարապատումն սպասաւորք նորին իշխանին վասակայ: Որոյ եւ վախճանն իւր անդէն յերկրն (°) Պարսից վճարէր, ըստ բանի սրբոյ առն(ն) Աստուծոյ Ղեւոնդի (85, տ. 12—20, 31—86, տ. 3):

Վասակ պատուազրկուեցաւ, պահանջուեցաւ իրմէ՝ իւրացուած պետական հարկերը. վախճանեցաւ Պարսկաստան: Եղապէր տողերը խմբագրին երկարարանութիւններն են:

Նկատի առնելով այս հանգամանքները, պիտի հետեցնենք, որ Փարպեցի չէր կրնար յանձին վասակի «նեղաւոր» մը ներկայացուցած ըլլալ, եւ տողած ըլլար այն տողերը, զորոնք յառաջ բերինք, եւ որոնց արձագանքը կը լսու ի յաջորդ տողերու մէջ:

բ. Եղիշէ Կողբացի եւ Աբրահամ Մամիկոնեան:

Եղիշէի նուիրած մեր ուսումնասիրութեան մէջ ցոյց տուած էինք, թէ ան գրած է ճանօրէն Կարմիր վարդանանց Պատմութիւնը, ընդարձակ խօսելով մասնաւորապէս Ս. Քահանայից նահատակութեան վրայ, առաջնորդ ունենալով իրեն Ղ. Փարպեցւոյ Պատմութիւնը: Ամբողջութեամբ հասած է մեզի Ս. Քահանայից վկայարանութիւնը. եւ հատուածներ, երկրորդ ձեւքէ մը, զետեղուած Բ. վարդանանց Պատմութեան մէջ: Ուզուած է Բ. վարդանանց Պատմութիւնը ներկայացնել Ա. վարդանանց Պատմութիւն. եւ այսպէս ալ ընդունուած է ան սկսեալ Թ. դարէն մինչեւ այս օր: Կը համարիմ, թէ Եղիշէի վերագոյն յիշուած Ուսումնասիրութեան մէջ բաւականէն աւելի ապացուցուած է այս իրողութիւնը. եւ աւելորդ է այս տեղ խօսք վատնել այս մասին:

Անօգուտ վաստակ պիտի ըլլայ այնուհետեւ Ա. վարդանանց պատմութիւնը գրելու համար աղբիւր ծառայեցնել Եղիշէի այս մեզի հասած Պատմութիւնը, որ կեղծիք մըն է, բոլորովին անպէտ այդ նպատակին համար:

Նոյնը պիտի ըսեմ Աբրահամ Մամիկոնեանի Պատմութեան համար, որ հասած է մեզի Թովմաս Արծրունւոյ Պատմութեան մէջ աղաւաղուած, Ա. վարդանանց յարմարցուած ձեւին մէջ:

Թէ Աբրահամ Մամիկոնեանի եւ թէ Եղիշէ Կողբացւոյ գործերը իրենց սկզբնազրին մէջ նկատի ունէին Բ. վարդանանց, այսինքն 570—578 տարիներու ղիպաց պատմութիւնը:

Կը մնայ Կարմիր վարդանի Պատմութեան համար միակ աղբիւր Ղ. Փարպեցի, եւ այն իր սկզբնական ձեւին մէջ, զոր ջանացինք վերակազմել:

3.

ՆԱԽԸՆԹԱՅ ԵՐՋԱՆ

Դիոկղետիանոս խլած էր 297ին քրիստոնէայ Հայաստանէն Աղձենաց եւ Ծոփաց նահանգները, իսկ Գուգարաց նահանգը վրաստանի կցած եւ Արձախ եւ Ուտի նահանգները՝ Աղուանից: 362ին Յովիանոսի դաշինքով Աղձենաց եւ Ծոփաց աշխարհները անցած էին Պարսից: Այս երկու, Սասանեանց եւ Հռոմայեցւոց մեծ պետութիւններու մէջ կը շարունակուէին կռիւները Հայաստանի շուրջ. իւրաքանչիւր կողմն իր ազդեցութեան տակ ունենալ կը ձգտէր Հայաստանը: Վերջ տալու համար այս պատերազմներու, 385ին առաջարկեց Շապուհ Գ. Հռոմայեցւոց, բաժնել Հայաստանը իրարու մէջ: Հայաստանի 2 հինգերորդականը ստացան Հռոմայեցիք (Բարձր Հայք եւ Եկեղեաց գաւառները) եւ 3 հինգերորդականը՝ Սասանեանք: Բաժանման դաշնագիրը չէ հասած մեզի: Նաեւ Ժամանակակից օտար պատմագիրներու քով արձագանք չէ գտած այս գիրներու քով արձագանք չէ գտած այս գրած է գայն իր Պատմութեան մէջ:

Թէնոգոս Մեծն էր Հռոմայեցւոց կայսրն եւ Շապուհ Գ. Պարսից արքայից արքայն: Երկու Պետութիւններու մէջ խաղաղութիւնը հաստատելու համար զոհուեցաւ քրիստոնէայ Հայաստան զժնեայ քաղաքականութեան նեայ Հայաստան զժնեայ քաղաքականութեան նեայ իւրաց: Աններելի էր Թէնոգոս Մեծի ղիջողութիւնը քրիստոնէայ Հայաստանի երեք հինգերորդականը ենթարկելի հեթանոս, ի սկզբանէ անտի քրիստոնէութեան ոխերիմ հակառակորդ Սասանեանց բռնապետութեան, ժողովուրդ մը, որ 165 տարիէ ի վեր ընդունած էր քրիստոնէութիւնը եւ գայն տարածած էր հիւսիսային դրացի ազգերու Աղուանից եւ վրաց մէջ: Այս բաժանումով ոչ միայն Հայք, այլ եւ Կովկասեան երկու յիշեալ քրիստոնէայ ժողովուրդները կ'ենթարկուէին մազդէական կրօնքով յետամնաց Պետութեան մը: Որչափ ալ ուզենք ենթադրել, թէ Թէնոգոս Մեծ իր դաշնադրութեան մէջ սահմանած ըլլայ պայմաններ, որ Պարսիկը թոյլ տայ քրիստոնէայ հպատակներու, ապրել իրենց օրէնքներով անվրդով, բայց եւ այնպէս կարելի չէր ի յառաջագունէ հաւատալ, թէ պարսիկը տեսականօրէն պիտի ուզէ յարգել այնպիսի յանձնառութիւններ: Թէ նման պայմաններ սահ-

մանուած էին դաշինքին մէջ, թոյլ կու տայ ենթադրել 385—440 տարիներուն քրիստոնէութեան խաղաղ զարգացումը այդ երեք ազգերու մէջ, երբ անոնք նաեւ գրականութեամբ բարգաւաճեցան:

439ին գահ բարձրացաւ Յագկերտ Բ., որուն համար կը գրէ Կարխայի վկայից վկայագիրը, թէ իր թագաւորութեան առաջին հինգ տարիները շատ բարեմոյն էր, բայց սկսեալ վեցերորդ տարիէն, երբ սպանեց իր աղջիկն, որ միանգամայն իր կինն էր, եւ կոտորել տուաւ պարսիկ աւագանիէն շատերը, անցաւ Պարսից արիւնտուշտ թագաւորներու շարքը: 446ին կը ձեռնարկէ պատերազմ Քուշանաց ղէմ վրկանաց աշխարհին մէջ, որուն մասնակցած էր նաեւ վարդան Մամիկոնեան հայ այրուծիով. ինչպէս կ'ըսուի Յագկերտ «Իւրովք աչօք տեսեալ էր ի Մարվիոտս գնորա քաջութիւնն» (Փարպ. 79): Պատերազմի ընթացքին տեղի ունեցած անյաջողութիւններու պատճառը մոզերը վերագրած էին քրիստոնէաներու ներկայութեան կարաւանին մէջ: Ոչ միայն կարաւանին մէջ գտնուած քրիստոնէաները, այլ եւ ուրիշ չորս նահանգներու քրիստոնէաները կ'ենթարկուին կրօնական հալածանքի, երբ կը նահատակուին իբր 12.000 քրիստոնէաներ (Hoffmann, Auszüge, 51—57): Այս կը պատահի 447ին: Թէպէտ Զ. դարէ կ'երեւայ այդ վկայագիրը, բայց հաւանօրէն վաւերական աղբիւրէ մը քաղած է իր տեղեկութիւնները: Ուշագրաւ է, որ նաեւ ըստ Փարպեցւոյ Յագկերտի երկրորդ արշաւանքի անյաջողութիւնը նոյն մոզերը քրիստոնէից, յատկապէս Ս. Քահանայից ներկայութեան վերագրեցին (Փարպ. 87):

Բաւական են այս վկայութիւնները համոզուելու համար թէ Յագկերտ Բ. կը զըռնուէր մոզերու ազդեցութեան տակ, եւ ոչ լոկ անոնց մոլեռանդութեան զօհ երթալով գրգռուած էր քրիստոնէից ղէմ, այլ եւ քաղաքական նպատակներով:

Ան ունէր իրեն խորհրդական չարախորհուրդն Միհրներսէս, որ Արեաց հազարապետն էր:

1 Th. Nöldeke, Tabari, 114, 8., եւ J. Labourt, Le christianisme dans l'empire perse, Paris 1904, էջ 126, կը պաշտպանեն այն կարծիքը, թէ Յագկերտ ղէմ էր քրիստոնէից աւելի մոլեռանդութեամբ քան քաղաքական նպատակներով. բայց Միհրներսէսի թելադրութիւններն արքային, ըստ Փարպեցւոյ, քաղաքական տեսակետներ կը հետապնդէին:

Հայաստան իր 426-ին սկսեալ չունէր իր թագաւորը. Բարձրագոյն Դուռը Արտաշէս թագաւորի մահէն ետքը չէր նշանակած գահին վրայ յաջորդ. աշխարհը կը կառավարուէր պարսիկ մարզպաններով: Իր 442/3-ին մարզպանութիւնը յանձնուած էր Սիւնեաց տիրոջ, Վասակի, որ անկէ յառաջ (իր 416-էն) եղած էր Վրաց Մարզպան, եւ դիւրութիւններ տուած Մաշտոց վարդապետի աւետարանելու եւ հայ գրականութիւնը տարածելու Գուգարք նահանգին մէջ: Կորիւն ներկայացուցած էր զինքը իրրեւ «այր խորհրդական եւ հանձարեղ եւ յառաջիմաց շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» (ԺԲ. 2): Վասակ 444-ին իրրեւ մարզպան Հայոց ներկայ էր Շահապիւփանի ժողովին:

Հայոց Եկեղեցին Սահակի († 439) եւ Մաշտոցի († 440) մահէն ետքը չունէր եպիսկոպոսութեան աթոռին վրայ յաջորդ: Ազգին ընտրած թիկնածուին՝ Յովսէփ Երէցին շտուաւ Յազկերտ Բ. իր «վստահութիւնն» եւ թոյլտուութիւնը ստանալու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը օրինական ճանապարհով: Յովսէփ Երէց երբ այս նպատակով գնաց Դուռը, ենթարկուեցաւ հարձանքի եւ վերադարձաւ «խոստովանողական անուամբ» (Կորիւն, ԺԹ., 8): Յովսէփ վարեց Հայոց Եկեղեցին մինչեւ իր նահատակութիւնը «Երէց» աստիճանով:

Ի՞նչ կը հետապնդէր Պարսից Դուռը իր այս ընթացքով:

4.

ՅԱՊԿԵՐՏ Բ-Ի ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Վարազվազան Սիւնի սեպուհը կին առած էր Սիւնեաց տիրոջ եւ Հայոց Մարզպանի, Վասակի դուստրը: Բայց կ'ատէր ան իր կինը: Այս ընտանեկան գփտութիւնը կը խոցէր Վասակի հայրական սիրտը: Կը խորհէր իր դստեր անպատուութեան վրէժխնդիր ըլլալ: Կը գգայ Վարազվազան իր աներձօր սրտմտութիւնն եւ կը դիմէ փախուստի: Ապաստան կը գտնէ Միհրնբերսէի, Պարսից հազարապետին քով. հաճոյանալու համար անոր՝ կ'ուրանայ քրիստոնէութիւնն եւ կ'ընդունի մագղէական դէնը: Կը գրգռէ հազարապետը Վասակի դէմ. կը վստահացնէ, որ ինչպէս ինքը, նոյնպէս շատ Հայեր տրամադիր են մոզակրօնիկ ըլլալ, եթէ առաջար-

կուի անոնց: Եթէ ընդունին Հայերը առաջարկը, կը յուսար թէ ինքը իրրեւ վաստակաւոր պիտի գտնէ պատիւ, իսկ եթէ մերժեն, պիտի պատժուին, այս պարագային լուծած պիտի ըլլար Վասակէն վրէժխնդրութիւն:

Վարազվազանի սաղրանքները ոտնկոխ կը դտնեն Միհրնբերսէի մտքին մէջ: Քրիստոնեայ Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանքի զրացիութիւնը կայսերական սահմաններուն՝ վտանգաւոր նկատուած էր միշտ. կարող էին այդ աշխարհները մէկ օր քրիստոնեայ կայսեր ծառայութեան անցնիլ: Պէտք էր կանխել եւ այդ ժողովուրդները մագղէական դէնին շահիլ: Կը փութայ Միհրնբերսէ իր մտածմունքը Յազկերտ Բ. ի առջեւ հանել: Կը համոզէ արքայից արքայն, որ իր հպատակ ժողովուրդներու ինչպէս մարմնական, նոյնպէս հոգեկան բարօրութեան պարտքն ունի: Այդ ժողովուրդները ինչպէս կը հնազանդին մէկ թագաւորի, նոյնպէս պէտք է դաւանողն ըլլան մէկ կրօնի, պետական դէնի: Միհրնբերսէի խորհրդածութիւնները հաստատեցին նաեւ պարսիկ աւագանին եւ մոզերը: Թագաւորը տուաւ իր հաւանութիւնը: Գրուեցան հրովարտական Հայոց, Վրաց եւ Աղուանից, որոնց կ'առաջարկուէր ընդունիլ դէնիմագղէզնը: Անոնց կ'ընկերանար համառօտութիւն մը մոզական կրօնին. կը խնդրուէր միաժամանակ, որ յիշեալ ազգերն ալ քրիստոնէական կրօնի համառօտութիւնը ուղարկեն իրեն:

Հրովարտականները կը հասնին երեք աշխարհները:

Ոչ առանց վրդովումի կը կարգան Հայերը այդ հրովարտակը: Կը հրամայեն նախարարները գումարել համազգային ժողով: Կը հաւաքուին, հաւանօրէն Արտաշատ, 19 եպիսկոպոսներ, բազմաթիւ երէցներ եւ վանականներ, եւ 19 նախարարներ: Կը գրեն պատասխան մը: Այն թուղթը, զոր յառաջ բերած է Ղ. Փարպեցի (45—46), ինչպէս եւ Յազկերտի հրովարտակին պատճենը (43—44) կը թուի թէ Ղազարի գրչէն են: Կը յայտնեն ժողովականները, թէ իրենք հպատակներն են թագաւորին եւ անոր հարկատուները. եւ կը մնան իրեն ծառայութեան մէջ հաւատարիմ: Իսկ ի մասին կրօնի ունին իրենք իրենց նախնեաց հաւատքը, որուն մէջ կ'ուզեն յարատեւել անզրգուելի: Մագ-

ղէական դէնի վարդապետութեան ծանօթ են իրենք արդէն, ուստի պէտք չունին անոր համառօտութեան, զոր առանց բեկանելու կը վերադարձնեն, տեղի չտալու համար աւելորդ ծաղրանքի. նոյնպէս հարկ չեն տեսներ դնել արքայից արքայի առաջ քրիստոնէական վարդապետութեան համառօտութիւնը, որպէս զի զուր տեղ մոզերուն ծաղրանքի առարկայ չդառնայ այն:

Այս ժխտական պատասխանին չէր սպասեր Պարսից Դահլիճը: Մոզերը կը դրդեն թագաւորը խիստ միջոցներու դիմել. իսկ Միհրնբերսէ կը յայտարարէ, թէ Հայերը պիտի չհամարձակէին տալ յանդուզն պատասխանս, եթէ «ոչ ունէին նոքա այլուստ օգնականութեան յոյս», այս ինքն եթէ վստահացած չըլլային կայսեր օգնութեան (չլ 46): Նոյն իմաստով պէտք է պատասխանած ըլլան նաեւ Վիրք եւ Աղուանք:

Յազկերտ ի Դուռն կը կոչէ երեք ազգերու տանուտէրներն եւ աւագ սեպուհները: Մահ կը սպառնայ անոնց, որոնք տեղի չեն տար կոչին: Երեք աշխարհները միարանեցան հաստատուն մնալ իրենց հաւատքին մէջ: Եւ մեկնեցան անյապաղ ի Դուռն:

- Ասոնք են.
1. Վասակ Սիւնեաց տէր եւ մարզպան Հայոց.
 2. Միհրչապուհ Արծրունի.
 3. Արտակ Ռչտունի.
 4. Գաղիչոյ Սորիստունի.
 5. Վարդան Մամիկոնեան.
 6. Մանէճ Ապահունի.
 7. Վահան Ամատունի.
 8. Գիւտ Վահեուունի.
 9. Շմաւոն Անձեւացի:

«Իսկ յաշխարհէն Վրաց բղեչին Աշուշայ եւ այլ տանուտեարք աշխարհին», որոնք, ինչպէս նաեւ Աղուանից տանուտէրները չեն միջուած յանուանէ:

Նախարարները կը հասնին Տիգրոն եւ կը ներկայանան թագաւորին: Յաջորդ օրը կը գումարուի մեծ առեան: Այն տեղ են արքայից արքայն, աւագանին, մոզերը եւ քրիստոնեայ նախարարները: Յազկերտ դառնալով Հայոց ուղղեց հարցումս. Ըսէք ինձի, ի՞նչ կը համարիք զիս: Անոնք պատասխանեցին. ՁԶեզ կը ճանչնանք մեր եւ ամէնուն թագաւորը, որ ունիք իշխանութիւն արեւ-

պարզեւելու եւ մահուամբ պատժելու: Այդ պատասխանը, կ'ըսէ Յազկերտ, շատ անանման է այն պատասխանին, զոր գրած էիք: Ես եւ Արիք գոհ ենք ձեր ծառայութեանէ. բայց իմ փափագս է, որ յանձն առնէք նաեւ զայն, զոր ձեր հոգւոյ փրկութեան համար բարուք տեսած էի. այս ինքն հրաժարիք ձեր մոլար կրօնէն եւ ընդունիք գէնիմագղէզնը: Այլապէ պիտի ստիպէք զիս անտեսել ձեր վաստակն, արիւնքամ ընել զձեզ երկրիս անշուր անապատներու մէջ եւ ձեր կիներն ու որդիները, ազգն ու տակը բնաջինջ ընել:

Այս սպառնալիքի առաջ լուեցին նախարարները. միայն Վարդանն էր, որ համարձակութիւն առաւ ըսելու թագաւորին. Պատրաստ եմ ծառայութիւնս առաւել չափով մատուցանել. բայց կրօնս, զոր ի մանկութենէ ուսած եւ պաշտած եմ, չեմ կրնար ազդուած մարդկային երկիւղէ՝ ուրանալ: Հայ նախարարները նկատեցին Յազկերտի աչքերուն մէջ սաստիկ սրտմտութիւն. խնդրեցին իրմէ, որ թոյլ տայ իրենց ժամանակ խորհելու այս ծանր հարցի շուրջը: Շնորհուեցաւ անոնց խնդիրքը. եւ փակուեցաւ առեանը:

Սասանեան բռնապետի անմիջական սպառնալիքի տակ էին երեք քրիստոնեայ ազգերու տանուտէրները: Անոնց մեծագոյն մասը միտեցաւ կեղծօք ընդունիլ մոզական դէնը. իսկ վերադարձին հայրենիք կա'մ գէն ի ձեռնին պաշտպանել քրիստոնէութիւնը եւ կամ գաղթել արտասահման: Վարդան հակառակեցաւ ի սկզբան այս խորհուրդին. բայց ի վերջոյ տեղի տուաւ մեծամասնութեան ձայնին: Երդուեցան Աւետարանին վրայ անխախտ մնալ այս ուխտի վրայ:

Յայտնեցին թագաւորին, որ կ'ընդունին դէնիմագղէզն: Մտան ատրուշան երկրպագելու կրակին: Եւ յուղարկուեցան մեծամեծ պարզեւներով եւ շքով: Կ'ընկերանային իրենց բազմաթիւ մոզեր: Թագաւորը իրրեւ պատանդ պահեց իր քով Աշուշայ բղեչիւր. իր քով էին նաեւ Վասակի որդիք Բարիկ եւ Ատրնբերսէ (տպ. Ամիրնբերսէ), որոնք հաւանօրէն տարիներ յառաջ բերուած էին:

5.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Հայ նախարարները կոխեցին հայրենի հողը, «ոզլք եւ ոչ-ոզլք, կենդանի կիսա-



տուն մոխրանոցին», Զարեհաւան գիւղը, կրակարանը շուր կը նետէ եւ մոգերէն մաս մը կը սպանէ³:

Ամառ էր, հայ բանակը տակաւին ամառանոցի մէջ, երբ Աղուանից ազատներէն լուր կը հասնի, թէ Միհրնեբուհ, Արեայ հաղաբապետը Փայտակարան եկած է, զօրք կը հաւաքէ Աղուանից աշխարհի վրայէն Հայաստան արձակելու. եւ խորհուրդ կու տան Աղուանքի մէջ պատահել անոնց:

Հայ բանակը կը փութայ իջնալ Այրարատեան գաւառ: Մարդպանն Վասակ կ'առաջարկէ Վարդանին առ ձեռն բանակով ելլել Պարսից ընդառաջ. իսկ ինքը յանձն կ'առնէ մնալ միջնաշխարհ, ղիմադրելու Միհրնեբուհի, եթէ ուրիշ ճանապարհով Հայաստան մտնել փորձէ:

Վարդան յանձն կ'առնէ իրեն եղած առաջարկը մէկ պայմանով: Որոշած էինք, կ'ըսէ, Կայսեր պատգամաւորութիւն մ'ողարկել եւ անոր օգնութիւնը խնդրել. նախ պէտք է պատգամաւորութիւնը ճանապարհ ելլէ. ապա միայն պատրաստ եմ անյապաղ կատարելու ինչ որ կը հրամայէք:

Ինչպէս տեսնուի վերադոյն Վասակի թուղթէն, Մարդպանը նախատեսած էր ղիմել Կայսեր օգնութեան, եւ եթէ անկէ չգտնէ թիկունք, նիզակակցութեան հրաւիրել Հոները. որովհետեւ չէին կրնար յուսալ թէ Մարդպանական Հայաստանի մատակարարած տկար ոյժով հնարաւոր պիտի ըլլար Սասանեան Պետութեան բազմատարած բանակներուն ղիմակալել (հմմտ. Փարպ. 119, 22-138, 38-168, 10-15):

Մարդպանը կը գրէ նամակներ Թէոդոս Բ. Կայսեր եւ իր Ծերակոյտին, նոյնպէս առ Սպարապետն Անտիոքայ. կը գրէ առանձին առանձին թուղթեր նաեւ արտաքոյ մարդպանական Հայաստանի Մեծ Հայոց իշխաններու, Աղձնեաց, Անգեղ տան, Ծոփաց, Հաշտենից, Եկեղեաց եւ այլ գաւառներու: Այդ նամակները կը կնքեն նաեւ Հայոց տանուտէրները:

Կայսեր կ'առաջարկէին աշխարհովին մտնել իր ծառայութեան, եթէ յանձն առնէ իր բանակներով թիկունք կանգնել իրենց: Հայ իշխանները կը հրաւիրէին նիզակակցութեան: Որովհետեւ նաեւ Վիրք եւ Աղուանք

նոյն պայմաններու տակ կը գտնուէին, նոյնպէս անոնք պիտի նիզակակցէին Հայոց հասարակաց թշնամուցն դէմ: Այսպէս բովանդակ հիւսիսային քրիստոնէայ ժողովուրդները Հոռոմէական Պետութեան հետ միացած պիտի ղիմադրէին Սասանականին. «Եւ նոքա (Յոյնք) եւ մեք միարանեալք միշտ աշխատունիմք (առնեմք) գտէրն Արեայ եւ զԱրիս», կը գրէր Վասակ Վարդանին:

Դեսպաններ կը կարգուին Վահան Ամատունի, Հմայեակ Մամիկոնեան եւ Մեհրուփան Արծրունի (Փարպ. 63-այլուր կ'ըսուի. «զՎահան Ամատունի եւ զայլս ի նախարարացն յիւրաքանչիւր տոհմէ ի Հոռոմս արձակեաց», էջ 84): Անշուշտ զՎահան, որուն ղիտաւորութիւններուն ծանօթ էին, անվստահելու համար ներս առած էին դեսպանութեան մէջ:

Դեսպանութիւնը կը մեկնի: Կը մեկնի նաեւ Վարդան առձեռն զուեղով Աղուանից աշխարհ:

Դեսպանները կը հասնին Կ. Պոլիս եւ կը ներկայանան Կայսեր եւ իր Ծերակոյտին: Թէոդոս Բ. կը խոստանայ ընդառաջ դալ Հայոց. եւ մինչ կը պատրաստէր «զիրս խոստմանն», կը վախճանի արկածով մը (20 յուլիս 450): Իրեն յաջորդ կը կարգուի Պուղքերիա, իր առաքինի քոյրը, որ ամուսին կ'առնէ քաջ զօրավարն Մարկիանոս (25 օգոստոս 450). որուն համար կ'ըսուի թէ էր խոհեմ եւ ամուր նկարագրով անձնաւորութիւն, բարեպաշտ եւ արգար: Նորընտիր Կայսրը խորհուրդ կը հարցնէ Հայոց առաջարկի մասին իր արեւելեան իրաց հմուտ աւագանւոյն, Անատոլիոսի, որ արեւելեան բանակին հրամանատարն էր, եւ Փղորենտիոս պատրիկին, որ 428-429ին եւ 438-339ին եղած էր Praefectus praetorio Orientalis⁴: Անոնք խորհուրդ չտուին Կայսեր բեկանել 385ին կնքուած խաղաղութեան դաշինքը եւ միջամուկ ըլլալ պատերազմի մը, որուն ելքը կարելի չէ դուշակել («զրդուել պատերազմաւ իրս մի խաղաղացեալս եւ ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թազաւորին իւրեանց: Այլ եւ զեյս անյայտ իրացդ պարտ է ածել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ որպէ՛ս, ղիւրա՞ւ եւ կամ սաստիկ պղտորմամբ պատերազմդ եղեալ վճարեսցի»:

⁴ Seeck: Pauli-Wissowa, Enzyklopädie, Suppl. VI, 2, 2758-2790.

³ Բնագիրը՝ «արս ի նոցանէ թուով սպանին», կ'ենթադրէ որոշ թիւ մը, որ զուրս ինկած է:

Փարպ. 73-74): Այս պատասխանը ստացան հայ դեսպանները հաւանօրէն նոյն տարւոյն սեպտեմբերի սկիզբը: Ուստի ղեգերած էին կայսերական քաղաքին մէջ իբր երկու ամիս: Վերադարձին երբ հասան Սաղտիք, լսեցին թէ Հայոց եւ Պարսից մէջ ընդհարումները սկսած են: Խոհեմութիւն չհամարեցան անցնել սահման, ամբողջ Պարսար լեռան ամբողջներէն միոյն մէջ:

6.

ԽԱՂԵԱՂԻ ԿՈՒՆԻԸ

Վարդան իր բանակով կը հասնի Աղուանից աշխարհը: Իմանալով անոր յառաջախաղացութիւնը՝ կ'աճապարեն Պարսիկները անցնել յայտնոյս Կուրի եւ ղերք բռնել Սաղտի գիւղին քով: Կը զգայ Վարդան թէ սակաւաթիւ է իր զօրքը համեմատութեամբ Պարսիկին. բայց չի վհատիր: «Եւ հասեալք է ժամ մարտին՝ հայեցեալ տեսանէին ըստ օրինի կարգման ճակատելոյ (տպ. նկատելոյ)՝ զգուճան Պարսից»: Յօրինեց նաեւ Վարդան իր ճակատը: Աջ կողմին զօրագլուխ կարգեց իր փեսան Արշաւիր Կամարականը, ճակա կողմին Խորէն Խորխոռունին, իսկ միջինը առաւ ինքը: Պարտուեցաւ Պարսիկը եւ ղիմեց փախուստի յայնկոյս գետին: Յաջորդ օրը միւս կողմը անցան նաեւ Վարդանաք: Յառաջացան մինչեւ ձորայ պահակը. կոտորեցին պարսիկ պահակապանները եւ յանձնեցին պահանջութիւնը աղուան (իմացիր՝ աջին պահանջութիւնը աղուան մասնաւոր յանձնարարութեամբ Մարդպանին Վասակի, որ նախատեսած էր, ի ղիպուածի որ Կայսրը յանձն առնէ օգնել Հայոց, երբ պէտքը զգացուի: առին օգնել Հայոց, երբ պէտքը զգացուի: Այս դեսպանութիւնը առանց տարակուսի առաքած էր Վարդան մասնաւոր յանձնարարութեամբ Մարդպանին Վասակի, որ նախատեսած էր, ի ղիպուածի որ Կայսրը յանձն առնէ օգնել Հայոց, ղիմել Հոնաց օգնութեան (83):

7.

ԱՆԱՐԱՅՐԻ ԶԱՎԱՍԸ

Աշուն էր արդէն, երբ վերադարձաւ Վարդան Աղուանքէն Այրարատ ձմերելու հոն: Գիտէին թէ Յազկերտ ձեռնամաճ պիտի հաջնար: Անցուցին ձմեռնային ամիսները. կառնեցին զատկական տօնը (8 ապրիլ 451)

իրենց ընտանեաց հետ: Քիչ յետոյ լուր հասաւ, թէ պարսիկ բանակ մը միջամուկ եղած է Հեր եւ Զարեհանդ գաւառ: Վարդան հրամայեց զօրակոչ եւ անյապաղ շարժեց բանակը: Առանձար Ամատունի ուղարկուեցաւ 300ով լրտեսելու պարսիկ զօրքի շարժումները: Բանակին զօրավարներն էին Մուկան Նիւսարաւուրտ եւ Գողմէն: Անոնք կը հետապնդէին իջնալ միջնաշխարհ: Վարդան որոշեց բախել անոնց Հեր եւ Զարեհանդ գաւառին մէջ. բայց գտաւ զանոնք Արտազի մէջ, Աւարայր գիւղի մօտ, տղմուտ դաշտի մը առաջ բանակած, երամարձակ, անպատրաստ: Կարող էր յանկարծական յարձակումով մը մեծապէս վնասել անոնց. բայց խոհեմապէս նկատեց նախ հանգիստ տալ իր զօրքին: 25 մայիսին, Պենտակոստէից պահոց ուրբաթ օրը, բանակ դրաւ Պարսից դէմ յանդիման: Իր հետ էին կաթողիկոսն Յովսէփ Երէց, Ղեւոնդ Երէց եւ ուրիշներ: Անոնք աղօթեցին ամբողջ գիշերը եւ քաջալերեցին զօրքը: Հաւախօսին մատուցուեցաւ պատարագ, զօրքը հաղորդուեցաւ: Առաւօտ էր. ճակատ յօրինեցին երկու կողմերն ալ: Վարդան բաժնեց իր զօրքը երեք առաջի. միջնոյն զօրագլուխ կարգեց Միհրշապուհ Արծրունի մարդպետը, անոր նիզակակց նշանակեց Արշաւիր Արշարունին եւ Արտակ Մոկացին: Աջ թեւին զօրագլուխ անուանեց Խորէն Խորխոռունին, անոր նիզակակցներ՝ Թաթուլ Վանանդեցին եւ Ներսէս Քաջբերունին. ձախ թեւը առաւ ինքը սպարապետն Վարդան, եւ իրեն նիզակակց՝ Փափագ Առաւելեան: Իսկ իր եղբայրն Համազասպեան թողուց վերջապահ, պատուիրելով, որ ոչ մէկը բռնադատէ կոուկուլու, այլ միայն յորդորէ:

Յարձակումը տեղի կ'ունենայ: Կը բախին երկու անհաւասար կողմերը իրարու: Ի սկզբան կը յաջողին Վարդանեանք պարսիկ զօրքը ի փախուստ դարձնել:

Հոս Փարպեցոյ Պատմութենէն թուղթ մը դուրս ինկած կ'երեւայ, ուր կը պատմուի կուրի շարունակութիւնն եւ Վարդանի եւ այլ 8 սեպտեմբերու եւ 276 զինուորներու նահատակութիւնը: Սեպտեմբերէն կը յիշուին Խորէն Խորխոռունի (զօրագլուխ աջ թեւին), Արտակ Պալուհի, Տաճատ Գնունի, Հմայեակ Դիմաքսեան, Ներսէս Քաջբերունի (նիզակակցն Խորէնի), Վահան Գնունի, Արսէն Ընծայնի եւ Գարեգին Սրուանձտեան:

Գնունեաց տոհմէն՝ Ասոմ .

Դիմաքսենից տոհմէն՝ Թաթուլ եւ Սա-
տոյ . «երկու եւս այլովք տոհմակցովք» .

Անձեւացեաց տոհմէն՝ Շմաւոն եւ Առա-
ւան .

Առաջին Առաւելոնից տոհմէն՝ Փափակ,
Վարդաբեկ եւ Դատ .

Մանդակունեաց տոհմէն՝ Սահակ եւ
Փարսման .

Տաշրացւոց տոհմէն՝ Վրէն .

Ռոփսենից տոհմէն՝ Բարեկ եւ Յոհան :

Ընդամէնը 31 հոգի :

Առբբ քահանաներէն Արրահամ եւ Սա-
մուէլ նահատակուեցան 454 հրոտից ամսի
7ին ի Վարդգէս (87) :

Բասենի Թաթիկ եպիսկոպոսը՝ նոյն տար-
ւոյն յԱսորեստան (88) : Խորէն Որկովցի եւ
Արրահամ Զենակեցի աքսորուեցան ի Շա-
փուլ Ասորեստանի (94, 106) . Խորէն վախ-
ճանեցաւ խոստովանողական վարքով, Արրա-
համ վերադարձաւ եւ ընտրուեցաւ Բնու-
նեաց եպիսկոպոս (106) : Իսկ միւս քահա-
նաները վկայեցին ի Ռեւանդ, 454, հրոտից
27ին (101) :

Յագիերտ մեռաւ 457ին : Իր յաջորդն Պե-
րոզ արձակեց իշխանները կապանքէն, իսկ
465ին շնորհեց անոնց ազատութիւն եւ վերա-
դարձ հայրենիք (110) :

9 .

ՎԱՍԱԿԻ ԴԵՐԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՄԵՋ

ա . 449ին, երբ Արտաշատի մէջ դուժա-
րուեցան հայ Եկեղեցականութիւնն եւ Զի-
նուորութիւնը պատասխանելու Յագիերտի
հրովարտակին, Հայոց մարզպանն էր Վասակ
Միւնեաց տէրը : Հայոց տուած համարձակ
պատասխանին մէջ Վասակի ձայնը անշուշտ
ազդողագոյնն եղած էր :

բ . Հայ տանուտէրներու հետ Վասակ ալ
ի Դուռն կոչուած էր, ուր կը գտնուէին իր
երկու որդիք պատանգ : Յագիերտի սպառ-
նայիքը ինչպէս միւս տանուտէրներուն, նոյն-
պէս Վասակին կ'արժէր : Զուսինք վկայու-
թիւն, թէ այդ սպտոնայիքներուն առջեւ առա-
ջին անգամ Վասակն եղած ըլլայ յողողողա-
գոյնը : Որոշեցին անոնք առ վայր մի ուրա-
նալ քրիստոնէութիւնը կեղծեօք, եւ վերա-
դարձին կա'մ իրենց արիւնով պաշտպան
կանգնիլ նախնեաց հաւատքին եւ կա'մ թո-
ղուլ աշխարհն եւ դաղթել արտասահման :

գ . Յաջորդեցան խարել թագաւորը եւ
վերադառնալ երկիր : Ժամանակ մը դեղեւե-
ցան տանուտէրները իրենց որոշման մէջ :
Պատասխանատուութիւնը կը ծանրանար ա-
ռաւելապէս Վասակի վրայ : Վահան Ամա-
տունի ապստամբութիւն կ'ուզէր պարզապէս
փլասելու համար մարզպանին, վրէժխնդրու-
թեան ոգւով : Կային տանուտէրներ, որոնք
պարսկական քաղաքականութեան կը մի-
տէին . ուրիշներ, որոնք կը խղճահարէին ու-
րացութեան լուծին տակ : Այս անորոշու-
թեան մէջ Վարդան Մամիկոնեան եղբարց
հետ կը նախընտրէ գաղթել Հոռոմէական
սահման :

դ . Երբ իրազգած կ'ըլլան Վասակ եւ Տա-
նուտէրները Վարդանի չուի մասին, տակ-
նոււրայ կ'ըլլան ամէնքը : Վասակ կը հա-
մոզէ նախարարները, թէ անմիջապէս պատ-
գամաւորներ պէտք է ուղարկել Վարդանի
հետեւէն, հաւանեցնելու, որ վերադառնայ :
Վասակ ինքը նամակ կը դրէ «Իբով մատա-
նեաւ» եւ կը հրամայէ որ աւագ տանուտէր-
ներն ալ գրեն իրենց կողմէն : Իր նամակին
մէջ կը խոստանար Կայսեր դիմել, Հոնք
հրաւիրել եւն : Վարդան կը վերադառնայ :
Այս տեղ ցոյց կու տայ Վասակ իր մտահոգու-
թիւնը, միաժամանակ իր հաստատուն կամքը
դիմադրելու բռնապետին դէնքով : Դիմա-
դրութեան ծրագիրը պատրաստուած էր : Կը
մնար յայտնի բարձրացնել ապստամբութեան
դրօշը : Այս կէտի մէջ կը դանդաղէր Մարզ-
պանը . թերեւս վասն զի իր երկու որդիք
պատանդ էին Տիգրոն, հոն էր նաեւ Աշուշայ
բղէխ : Եթէ Վասակ արամադրուած ըլլար
դրժել Տիգրոնի Երզումը, պիտի չհետա-
պնդէր, որ Վարդան սպարապետ վերադառ-
նար . որովհետեւ ան ի սկզբանէ հակառակ
էր նոյն իսկ կեղծեօք ուրացութեան : Գիտէր
անոր աղէկցութեան առաւելութիւնը նախա-
բարներու վրայ : Ամէնէն աւելի ան խոչըն-
դոտն պիտի ըլլար իր նենգաւոր մտածու-
թիւններու, եթէ երբեք նման մտքերու
անձնատուր եղած ըլլար :

ե . Վարդանի պնդումի վրայ Վասակ,
ինչպէս կ'ըսուի, «թէպէտ եւ ոչ կամաւ, սա-
կայն ի հարկէ յանձն առեալ միաբանէր»
մեծամասնութեան ձայնին : Կ'երդուուն ամէնքը
Աւետարանին վրայ մնալ քրիստոնէական հա-
ւատքին մէջ հաստատուն, ինչ ալ պատահի :

Ապստամբութիւնը հրատարակուած էր : Ար-
ձագանդը լսուած էր մինչեւ Պարսից Դուռը :

զ . Խորհուած էր կանխաւ Կայսեր դիմել
եւ անոր ծառայութիւն առաջարկել եւ օգնա-
կան զօրք խնդրել : Բայց դեսպանութիւնը
կ'ուղարկեն, դարձեալ Վարդանի պնդումին
վրայ, երբ Պարսից զօրքը շարժման մէջ էր
արդէն : Կայսեր եւ ուրիշներու գրուած թուղ-
թերը կը կնքէ նախ Մարզպանը եւ ապա տա-
նուտէրները : Վասակ գիտէր անշուշտ թէ
որքան ծանր էր իր առած քայլը :

Պէտք է ըսել, թէ շատ հապճեպ առ-
նուած է այս քայլը : Առանց կանխաւ շօշա-
փած ըլլալու Կայսեր տրամադրութիւնը, ա-
նոր կը դիմեն, երբ արդէն հրատարակած
էին ապստամբութիւնը յայտնի : Գիտէին ա-
ռանց տարակոյսի իրենց ոյժին անհամեմատ
նուազութիւնը եւ Արեաց լայնատարած բա-
նակներու գերակայութիւնը : Եւ եթէ Կայսեր
պատասխանը ժխտական հնչէր, ինչպէս ար-
դեամբք եղաւ, Հոնական վարձկան ամբ^ո իւր
պիտի փրկէր մարզպանական Հայաստանը
արքայից արքայի վրէժխնդրութիւնէն :

է . Ինչպէս կ'երեւայ, զինուորական
դժուարին կացութեան յետոյ անդրադարձաւ
Վասակ, երբ ուշացաւ Կայսեր պատասխանը,
մանաւանդ երբ վերահասու եղաւ անոր ան-
տրամադրութեան : Հոնքը, թէեւ յայտնած
էին իրենց պատրաստակամութիւնը, հարկ
չտեսնուեցաւ օգնութեան կանչել : Այս պա-
րզաններու մէջ խոհեմութիւն համարեցաւ
Վասակ միջնաշխարհին մէջ կարճել ազատա-
զրական շարժման ալիքները . գսպել ամբո-
խային պոռթկումները, խաղաղ պահել աշ-
խարհը եւ սպասել իրաց առնելիք ընթացքին :

ը . Վասակ միջամուխ չեղաւ կռիւնե-
րուն . սպարապետին յանձնած էր այս սուպա-
րէզը : Արգելք չհանդիսացաւ անոր . ինքն էր
անշուշտ, յայտնի կամ ծածուկ, պատերազ-
մական պիտոյքներու հայթայթիչը : Իր Սիւ-
նիներն ալ, Բարկէն եւ Բակուր սեպուհները
ապստամբներու շարքին էին :

թ . Աւարայրի կռուէն վերջը Յագիերտ
նոր մարզպան կը կարգէ Հայոց : Ապացոյց
մըն էր այս, թէ տեղի մնացած էր արքայից
արքայ Վասակէն . թերեւս անոր անըջա-
հայեցութեան վերագրած ապստամբութիւնը :
Վասակի պատերազմական դաշտէ հեռու
մնալը փրկած է զինքը ամէն կասկածէ :

ժ . Ոչ նախարարները, ոչ Ս . Քահանայք
եւ ոչ ալ Պարսից աւագանին որ եւ է ամ-
բաստանութիւն յառաջ չեն բերած Վասակի
մասին մեծ ատեանին առաջ :

ժա . Հայոց աւագները կ'երեւայ թէ
տեղի մնացած էին Վասակի ընթացքէն : Ան
չէր բերած մասնակցութիւն կռուին : Բայց
ինքն էր, որ կռուի մղած էր աւագները իրենց
զօրքով : Ան վստահացուցած էր անոնց թէ
Կայսրն օգնական պիտի ըլլայ իրենց, եւ եթէ
յանձն չառնէ Կայսրը օգնել Հայոց, պիտի ըլ-
լան իրենց նիզակակից Աղձնեաց եւ Մոփաց
տանուտէրները, ի վերջոյ Հոնքը : Ոչ մէկը
սակայն թիկունք եղաւ իրենց, եւ ոչ իսկ
հայ բանակը իր ամբողջական ոյժով : Աւա-
րայրի ճակատին ճախողութիւնը ցնցած էր
զանոնք . ի^ոնչ էր ճախողութեան պատճառը :
Բնագիրը հոս պակասաւոր է : Արշաւիր Կամ-
սարականի բերանը կը գրուի տեղիքս .
«զայնպիսի պիտանի ձեր ծառայ (զՎարդան)
սպան (Վասակ) եւ այնչափ բազմութեան
Պարսից եւ Հայոց կոտորածի եւ աշխարհին
կորստեան եղեւ պատճառ» (84) : Եթէ հա-
րազատ է տեղիքս եւ «սպան» լայն իմաս-
տով ըսուած չէ, կը հարկադրէ դաւաճանու-
թիւն մեծթաղքել, որ սակայն ուրիշ կողմէ
կարելի չէ հաստատել :

ժբ . Անոնք եկած էին պատասխանատու-
ութեան՝ զինուած վաւերագրիւններով : Անոնց
մտադրութիւնն էր ապստամբութեան հեղի-
նակ Վասակը ցոյց տալ : Իրենց յանցանքը
չքմեղելու համար : Արշաւիր Կամսարական
չատ հակիրճ խօսքերով ներկայացուցած է
ապստամբութեան դրդապատճառը, կազմա-
կերպութիւնը, հեռապատկերն եւ ճախողու-
թիւնը : Դրդապատճառ ցոյց տուած է թա-
ղաւորը . կազմակերպող եւ հրատարակիչ՝
Վասակը : Խօսք չէ շուայլած, կիրք չէ արտայ-
այտած ամբաստանելու Վասակը . խօսիլ կու
տայ լոկ վաւերագրիւններուն, ստորագրուած
եւ կնքուած Վասակէն, զորոնք կը դնէ թա-
գաւորին առջեւ :

ժգ . Վասակ կը դատապարտուի . զըր-
կուած էր մարզպանութենէն, կը զրկուի
նաեւ Սիւնեաց տանուտէրութենէն . կը պա-
հանուի իրմէ վատնուած պետական գանձը :
Մահապարտութիւն չի վճռուիր, թէպէտ
քրէական էր յանցանքը . չի յիշուիր նաեւ
թէ կալանաւորուած եւ բանտարկուած ըլ-
լայ . կ'ապրի եւ կը մեռնի հեռու հայրենի-

քէն: Իսկ ապստամբ իշխանները կը զրկուին տանուտէրութենէն, կը դատապարտուին ցկեանս շղթայակապ կալանաւորութեան: Պերոզ միայն կու տայ անոնց անյիշաչարութիւն (amnestie): Բայց նկատելի է, որ Յազկերտ պահեց իր խօսքը. չպատժեց զինուորական ապստամբները մահապատիժով: Նահատակուեցան միայն եկեղեցականները:

Եզրակացութիւն:

Վասակ իբր 35 տարիէ ի վեր զինուորական ծառայութեան մէջ էր իբրեւ մարզպան Վրաց եւ մարզպան Հայոց. վաստակաւ մը Դրան: Եթէ ան իբր 30 տարեկան կոչուած էր պաշտօնիս, այժմ ըլլալու էր 65ամեայ մը: Անգնահատուած էր Կորիւնէն իբրեւ «այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց»: 449 տարուոյ զէպքերը ցընցած էին զինքը, ինչպէս բովանդակ ազգը: Քրիստոնէական մշակոյթը Մահակի եւ Մաշտոցի ջանքերով պայծառացած էր եւ լուսաւորած, ոգէզինած մեծ եւ փոքր, աւելի քան երբեք: Պարսիկ Բոնապետի սպառնալիքները գրած էին քրիստոնէայ ժողովուրդը անել կացութեան մէջ: Տանուտէրները ուրացած էին — թէ եւ կեղծեօք — քրիստոնէութիւնը: Մոզերու բազմութիւնը պաշտօնական հանգամանքով, կը ճնշէ ամէնուն սրտերը: Նախարարներու որոշումը թողուլ աշխարհն եւ հատուածել, վտանգաւոր էր րամկին համար: Օրինակը տուած էր Վարդան Մամիկոնեան, որուն պիտի հետեւէին ուրիշները: Վասակ էր «իշխան եւ զլուխ աշխարհին Հայոց»: Իրաց կացութեան առջեւ ինչպէս չըլլար մտածողը: Իր երկու որդիներն ալ պատանդ էին Դուռը: Աւագ տանուտէրները հաւաքուած իր շուրջը ելք կը խնդրեն անելք կացութենէն: Կը յաջողի Վասակ անյոյս խոստումներով ետ դարձնել Վարդանը: Ապստամբութիւն ծրագրած էր Վասակ, խոստացած էր Կայսեր զիմել, հարաւակողման նահանգներէն օգնութիւն խնդրել, Հոնները հրաւիրել...: Պիտի գտնուէի՞ն անոնք հաւան: Ապստամբութիւնը կը հրատարակուի: Թշնամին շարժման մէջ է: Իշխանները կը պահանջեն Մարզպանէն արտաքին օգնութիւն: Դեռ նոր հրովարտակներ կը գրուին եւ դեսպաններ կ'ուղարկուին: Յուսախար կ'ըլլան: Առաջին բախումը թշնամուցն հետ տեղի ունեցած էր յաջողութեամբ: Երկրորդը մո-

տալուտ էր: Դարձեալ չկայ ոչ մի յոյս արտաքին օգնութեան:

Վասակ գործած էր զէպքերու եւ պարագաներու ճնշումին տակ, կարճ ժամանակով:

Իմաստուն ռազմագիտութեան եւ խոհեմ քաղաքագիտութեան թելադրութիւնը չէ՞ր ընդարձակել ռազմադաշտը եւ ապստամբութեան տալ բողոքի կերպարանք ահաւոր թշնամուցն բռնապետութեան դէմ: Վասակ չէր սխալած իր հաշուին մէջ:

Աւարայրի ճակատը, Վարդանի մահը, 1036 հայ եւ 3544 պարսիկ, ուստի միահամուռ 4580 զօրաց զուր կորուստը լսելի ըրին Հայոց Բողոքի ձայնը Արեաց Դուռը: Հայերը սակաւ կորուստով ձեռք բերին եկեղեցւոյ ազատութիւնը, յաղթանակեց քրիստոնէութիւնը: Երկիրը գերծ մնաց աւերածութենէ:

Ե. դարու հայ մշակոյթը չէր կրնար ծնիլ այն «նենգաւոր, ուխտանենդ» Վասակը, զոր իբրեւ եղջերուաքաղ, իբրեւ հրէշ երեւակայած են յաջորդ դարեր, սկսեալ իբր 700էն:

Վասակ Սիւնեաց տիրոջ եւ Հայոց Մարզպանին պէտք է վերադարձնել իր պատիւը իբրեւ «այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» (Կորիւն, ԺԲ. 2):

10.

ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Թէոդորեոս Կիւրոսի եպիսկոպոսի երկու քղբերը գրուած Պարսկահայոց:

Վարդան Մամիկոնեան ըսած էր, թէ իր քաջութիւններու արձագանքը մինչեւ Կայսեր Դուռը պիտի լսուի: Լսուեցա՞ւ իրօք: Ժամանակակից պատմագիրները այս մասին որ եւ էրան չեն հաղորդած: Բայց մենք տեսանք, որ Հայոց զեասպանները 450 յուլիսին հասան Կայսեր արքունիքը, յանձնեցին Թէոդոս Բ.ի եւ Ծերակուտին Հայոց Թղթերը. պատմեցին նաեւ բերանացի Յազկերտի յարուցած նոր հալածանքի մասին: Անոնք մնացին հոն մինչեւ սեպտեմբեր: Կայսերական Դուռը թէ եւ չկրցաւ օգնութեան հասնիլ Հայոց զօրքով, բայց հետեւեցան անշուշտ Կովկասեան Հիւսիսի երեք քրիստոնէայ ժողովուրդներու դժուարին կացութեան: Կարելի է մտածել թէ Պուզքերիա կայսրուհի եւ Մարկիանոս

կայսր միջնորդած ըլլան Յազկերտի քով, չնեղելու քրիստոնէայ ժողովուրդը իրենց կրօնին համար: Աւարայրի կռուէն ետքը արքայից արքայի տրամադրութեան յանկարծական փոփոխութիւնը, հրովարտակին յետադուր եւ եկեղեցւոյ ազատութեան վերաջնորհումը կրնան թոյլ տալ ենթադրել այս միջնորդութիւնը:

Յազկերտ որչափ ալ թոյլ տուաւ քրիստոնէութեան ազատութիւնը, բայց եւ այնպէս բաց թողուց դուռը անոնց առջեւ, որոնք ինքնակամ կ'ուզէին ընդունիլ Պարսից դէնը: Ղ. Փարպեցի կը խօսի յետ-պատերազմեան շրջանի տխուր կացութեան մասին. եկեղեցւոյ փարախէն հեռացողներու թիւը կ'աճէր, վասն զի ուրացեալներուն ամէն առաւելութիւն կը չնորհէր Դուռը: Եկեղեցականութեան ականաւոր դէմքերը՝ Յովսէփ երէց կաթողիկոս, Ղեւոնդ երէց եւ ուրիշներ կալանաւորուած էին. չունէր եկեղեցին իր զլխաւոր առաջնորդը: Անհովիւ կը զգար ինք զինքը եկեղեցին:

Այս կացութեան մէջ երկու հայ եկեղեցականներ կը դիմեն Կիւրոսի համբաւաւոր եպիսկոպոսին, Թէոդորեոսի խնդրելու իրեպիսկոպոսին, Թէոդորեոսի խնդրելու իրեպիսկոպոսին, Թէոդորեոսի կառավարութեան եւ ապա անկեղեցւոյ ընդունելութեան մասին. որոնց սիրալոյսով կը պատասխանէ Թէոդորեոս:

Թէոդորեոս եպիսկոպոսն էր Կիւրոսի թեմին, որ կ'իյնար Անտիոքի շրջանին մէջ: Ի սկզբան իբրեւ կուսակից Նեստորի բուն թափով ելաւ Կիւրեղ Աղեքսանդրացւոյ «մի թուութեան» վարդապետութեան դէմ, բայց բնութեան վարդապետութեան դէմ, բայց զանազան հարգէն 449ին, հաշտուեցաւ Եկեղեցւոյ հետ, զատապարտեց Նեստորի վարդապետութիւնը, մասնակցեցաւ Քաղկեդոնի ժողովին, շարունակեց իր հովուական եւ մատենագրական գործունէութիւնը մինչեւ մահը, որ ըստ Գենագիտի տեղի ունեցած է Լեւոն կայսեր (457—474) օրով, հաւանօրէն անոր զահակալութեան առաջին տարիներուն: Թողուցած է բազմաթիւ աստուածաբանական, մեկնողական եւ պատմական աշխատութիւններ, անոնց թուին մէջ նաեւ իբր 230 թիւները, անոնց թուին մէջ նաեւ իբր 230 թիւները զանազան բովանդակութեամբ:

Այդ նամակներէն երկուքը գրուած են Պարսկահայոց Եւզաղ եպիսկոպոսին եւ Եւսերիոս եպիսկոպոսին կամ երէցին, հաւանօրէն 452—454 տարիներուն:

Եւզաղ Մարզաղոյ եպիսկոպոսն էր, որ կը յիշուի 449ի Արտաշատ ժողովուրդ եպիսկոպոսներու թուին մէջ համաձայն այն Յանկին, որ Եղիշէի Պատմութեան մէջ պահուած է (էջ 22), մինչ կը պակսի, անշուշտ օրինակով անփութութեամբ, Փարպեցւոյ Յանկին մէջ, ինչպէս Եղիշէի քով ալ անտեսուած է «Չաւէն եպ. Մանանաղոյ, զոր ունի Փարպեցի: Սա ի ձեռն Ստեփանոս երէցի խնդրած է Թէոդորեոսու եպիսկոպոսէն հրահանգներ անկեղեցւոյ (ուրացեալներու) ապաշխարութեան մասին:

Երկրորդ թուղթը գրուած է Եւսերիոս եպիսկոպոսին կամ երէցին, որ խնդրած էր, թէ ո՞վ պէտք է հովուէ եկեղեցին, երբ եկեղեցւոյ գլուխը բացակայ է (այսինքն կալանաւորուած տարուած է Վրկանաց աշխարհը): Կը հարցնէ միաժամանակ, թէ ի՞նչպէս վերընդունելու է ուրացողները: Այլուստ անձանօթ է Եւսերիոս եպիսկոպոս (երէց):

Այս երկու թուղթերը մինչեւ այսօր նկատի չեն առնուած հայ հին եւ նոր պատմագիրներէ: Անոնք սակայն շատ հետաքրքրական վաւերագրեր են Վարդանանց պատերազմին անմիջապէս յաջորդ շրջանին համար, կը հաստատեն միանգամայն, որ քրիստոնէութեան հալածանքը, զոր կը նկարագրէր Ղ. Փարպեցի, պատմական են, իրօք տեղի ունեցած:

Այս տեղ կու տամ այդ երկու բնագիրներու մասնակի թարգմանութիւնը, այնպէս ինչպէս գտած եմ Հ. Յ. Գաթրըճեանի անսխալ գրուածքի մը մէջ: Յոյն բնագիրները հանդերձ լատիներէն թարգմանութեամբ տես Migne, Patrologia Graeca, t. 83, col. 1245—1256.

ԹԵՈՒՌՈՐԵՍԱՅ ԹՈՒՂԹ ԷՆ

Եւզաղեայ եպիսկոպոսի Պարսկային Հայոց¹:

Գիտացի զի եւ զձեզ քննեաց սասանայ, զի եւ զձեզ խարբայեցէ իբրեւ զգորեան. եւ բոյլ ետ Տէրն զի երեւեցուցէ զգորեանն, զի փորձեցէ զուսկին, զի զփառաւորիչսն իւր փառաւորեցէ, զի զմահատակսն պակեցէ, զի զյաղթողսն քարոզեցէ: Ես երկնչիմ եւ դողամ՝ ո՛չ վասն ձեր ինչ որ վասն նշմարտութեան քաջութեամբ նգնիք, այլ զիտելով

¹ Ἐδδαλίω ἐπισκόπῳ τῆς περσικῆς Ἀρμενίας, Migne, Patr. gr. 83, col. 1245—1252.

թէ եւ ոմանց մարթ է տկարագոյնս լինել: Զի եթէ յերկոտասան առաքեալսն մի ոմն մատնիչ գտաւ, յայտ է թէ ի բազմամբոյս մարդկան միջի բազումք գտանիցին, որ ի կատարելութենէ անտի պակասեալ գտանիցին: Զայս գմտաւ ածեալ՝ խոռվեցայ եւ լի եղէ մեծաւ տրտմութեամբ: Զի յորժամ վշտանայ մի անդամն, ըստ աստուածեղէն առաքելոյ՝ վշտանան ամենայն անդամքն: Մի մեծանց անդամք է մի մարմին ամփոփիմք՝ գլուխ ունելով զՏէրն Քրիստոս: Սակայն մի ինչ է որ զվիշտսն իմ ցածուցանէ՝ յորժամ գմտաւ ածեմ զգո սրբութիւնդ: Քանզի ուսեալ յաստուածեղէն պատգամացն եւ ի հովուապետէ անտի թէ որպիսի ինչ պարտ իցէ բարոյ հովուին լինել՝ յայտ է թէ փոխանակ հօտին դնիցէք գանձին: ... Այսպէս եւ զօրավար քաջ գառափնութիւնն ցուցանէ ոչ ի խաղաղութեանն ժամանակի, այլ ի պատերազմի՝ մերթ զայսմ քաջալերելով եւ մերթ ինքն վասն զօրուն ի վտանգ գանձն արկանելով: ... (Յետ այսորիկ զօրինակ մարգարէին եւ մանաւանդ գառափնայն բերեալ որք առանց ունելոյ ինչ ընթացան ընդ ամենայն եւ գամենայն վտանգս յանձն առին վասն օտարաց): Առաւել եւս յիրարի է, ասէ, ի վերայ հաւատակցացն եւ եղբարց եւ որդւոց ընդունել զեկեալ հասեալ զվտանգն: ... Զայս ասեմ ոչ զի (անբանիցն օրինակօք) գաստուածսիրութիւնդ յորդորիցեմ, այլ զի զիմ տրտմութիւնս սփոփիցեմ եւ հաւանեցուցանիցեմ ի յարձակել անդ գայլոցն չքողով անհովիւ գիտն Քրիստոսի, այլ կոչեցեալ յօգնականութիւն գնորին Տէրն ուրախութեամբ տալ մարտ պատերազմի ի վերայ հօտին: Քանզի այս իսկ ժամանակ է յայտնելոյ թէ ո՛ր հովիւ եւ ո՛ր վարձկան իցէ, ո՛ր գիտն արածիցէ զգուշութեամբ եւ ո՛ր զկաթն ուտիցէ եւ զասրն ազանիցի եւ զխաշանց ոչինչ փոյթ առնիցէ: ... Զայն իսկ ազաչեմ գաստուածպաշտութիւնդ՝ զի առ տկարագոյնսն առաւել հոգ յանձնն ունիցիս, եւ ոչ միայն զժեմեալսն հաստատիցես, այլ եւ գանկեալսն կանգնիցես: ... Զայս միշտ եւ աստուածեղէն առաքեալն Պաւղոս անէր... (Գաղ. Գ. 19. Բ. Կոր. Բ. 7 և 11): Այսպէս եւ որ զգոհեալսն ուտիքն՝ ե՛ւ յանդիմանեաց ըստ պատշանին ե՛ւ որպէս ի դէպ էր յորդորեաց եւ ի դժնդակ մոլորութենէն գերծոյց: Նմին իրի եւ Տէրն մեր Քրիստոս գառաչակցս

առաքելոցն՝ գորոյ զգաւանութիւնն իբրեւ խարխիս ինչ եւ հիմն եկեղեցւոյ հաստատեաց՝ թոյլ ետ դեղեւել եւ ուրանալ, եւ կանգնեաց գնա միւսանգամ, երկու ինչ նովին յայտ արարեալ, մի՛ յանձնս ապաստան լինել, եւ զդեղեւեալսն հաստատել: Նմին իրի ձեռն տուք ազաչեմ անկելոցն, հանէք զնոսա ի գրոյ տառապանաց ի կաւոյ եւ ի տղմոյ եւ կացուցէք ի վերայ վիմի գոտս նոցա եւ տուք ի բերանս նոցա երգ զօրհնութիւն Աստուծոյ մերոյ. զի որ ի նոսա օրինակ չարեաց էր՝ լիցի օրինակ փրկութեան. զի տեսցեն բազումք եւ երկիցեն եւ յուսացին ի Տէր Աստուած մեր: Արգելցին ի հաղորդութենէ սրբոցն խորհրդոց, բայց յերախայիցն աղօթից մի խափանեցին եւ ոչ յունկնդութենէ աստուածեղէն գրոց եւ ոչ ի խրատուէ վարդապետացն: Իսկ ի սրբոց խորհրդոց արգելցին ոչ եթէ ցմահ, այլ առ ժամանակ մի, մինչեւ ի միտ անցեն զմահն, մինչեւ ցանկացին կենաց, եւ ծանիցեն թէ թողեալ զքազաւորն առ բռնաւոր անդր գնացին հաստուած, եւ գրարեարն թողեալ՝ ետուն գանձինս թշնամոյն: ... Հանդերձ այսոքիւք ազաչեմ զսրբութիւնդ ձեր՝ զի մտադիւրագոյնս աղօթս առ Աստուած վասն իմ առնիցէք զի զմնացուածս աւուրց կենաց իմոց ըստ նորա օրինացն անցուցանիցեմ: Զայս ամենայն գրեցի ի ձեռն պատուականի եւ ազնուապաշտօնն երկուս Ստեփանեայ՝ զոր ուրախութեամբ իսկ տեսի վասն պարկեշտութեան վարուց նորա:

ԹԵՈՒՈՐԵՏԱՅ ԹՈՒՂԹ ՀԸ

Եւսեբեայ երիցու Պարսկային Հայոց²: Յորժամ վիշտք ինչ ի վերայ դեկավարին հասանիցեն, կամ նաւապետն (proreta) եւ կամ նաւորդացն գլխաւոր՝ գնորա գործ ի ձեռն առնու, իբր ոչ եթէ ինքն զինքն դեկավար կացուցանելով այլ զփրկութիւն նաւուն հոգալով: Այսպէս եւ ի պատերազմի իբրեւ զօրավարն անկանիցի առաջին ի հազարապետացն զօրավարութիւնն առնու՝ ոչ զիշխանութիւնն ինչ յափշտակելով, այլ գտնումակցացն փոյթ առնելով: Այսպէս եւ երիցս երանելին Տիմոթէոս գաստուածեղէնն Պաւղոսի գտեղին էլից ի նմանէ առաքեալ: Արդ պարտ

² Εὐσεβίου ἐπισκόπου (Near. προσβυτέρου) τῆς Περσικῆς Ἀρμενίας. Migne, P. g. 83, c. 1252—1256.

եւ պատշան է աստուածպաշտութեանդ ե՛ւ զդեկավարի եւ զօրավարի եւ զհովուի գործ յանձն առնուլ եւ գամենայն վիշտ վտանգի վասն խաշանցն Քրիստոսի ուրախութեամբ ընդունել: (Յետ այսորիկ գրքէ գնոյնս թելադրէ գոր ինչ առ եպիսկոպոսն թելադրեաց):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԵՓՐԱՏԻ ՍԵՂՄԵՆԵԳԼՈՒԹԵՐ ԳՈՐԳԷՈՍԻ ԺԵՄԵՆԵԿԷՆ ՄԻՆՉԵՆ ԸՐԱՐՄՈՑԻՈՑ ԸՅԹԱՐՅԵՎԵԼՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն):

§ 4. Նոր կազմութիւններ Գ. դարուն. Հեծեալք:

Այս զնդերը ծնած են նոյն իսկ Արեւելքէ մէջ. Հռոմէացիք միշտ ընդդիմութիւն մ'ուներցած են լեզէոնական հետեւակազօրը միացնելու հեծելազօրուն հետ. մանաւանդ որոշ ժամանակ մը լիակատար բաժնած էին երկուքս իրարմէ. բայց Գ. դարու կրկին վերանորոգեցին: Մոմսէն¹⁸⁸ մեծ կորովամտութեամբ կ'ենթադրէ թէ այս Հեծեալք (equites) լեզէոններու հին հեծելազօրունը կը ներկայացընեն: Հերձուժը կատարուած է երկու պատճառաւ. նախ՝ հեծելազօրը կ'աւելու թուով, ա'յնպէս որ մինչեւ այն ատեն հաւասարակշիռ երեւցածն ա'լ խանգարած էր. եւ երկրորդ՝ հեծելազօրաց երկու խմբերու՝ Մաւրիտանացոց եւ Դադամատացոց կամ Լիւրիկեցոց՝ բացարձակ զերակշռութիւնը կը միտէր յանդելու ձիաւոր տարերց այնպիսի յարակցութեան մը՝ որ լեզէոնները կը կղզիացընէր:

Հեծելազօրաց այս տեսակը Արեւելանու ընդդէմ Պարսկաւայլ մղած պատերազմին¹⁸⁹ մէջ մեծ ծառայութիւններ մատուց իւր յանդակութեամբն ու զիւրաշարժութեամբ: Զե-

նորայի յաղթողը նոր որեւէ ապստամբութեան մ'առջեւը կանխաւ առնելու համար՝ ընդդէմէն կազմուած հին պահակապան զօրազնդերուն մէջ առատօրէն խառնեց ցրուեց այս օտար ցեղերէն ու երկիրներէ եղած զնդերը, եւ կցեց ուրիշ զօրարածիներ ալ՝ Գոթաց, Յութոնգացոց, Ալամանաց: Ինքն իրմէ կը հասկըցուի թէ զինուորագրութիւնը չէր կրնար շարունակուիլ միեւնոյն հիմանց վրայ. ինչպէս Թեւոց ու Վաչուոց համար՝ պարապները կը լեցուէին նոյն տեղն առնուած զինուորներով: Սակայն եւ այնպէս նախնական անուանակոչութիւնք մնացին այնուհետեւ ալ. եւ այս վերջին յիշուածները պարզապէս փոխուեցան խառնուեցան Մատարաց մէջ (auxilia), իբր ո՛չ այնչափ պանծալի՝ որչափ էին Մաւրիտանացիք, Դադամատացիք եւ Լիւրիկեցիք, որոնք այլընտրի զօրազնդեր կը կազմէին՝ լեզէոններէն ալ նախադասութիւն մ'ունենալով: Այս ամէն միութեանց իւրաքանչիւրին սկսաւ դործածուիլ քուոյ (numerus) ընդհանուր բացատրութիւնը. բայց պաշտօնական դասակարգութեան մէջ պէտքստութեանց այնպիսի խուռն բազմութիւն մը կը զանազանուէր՝ որ դժուար է պատուոյ աստիճանաց մէջ իւրաքանչիւրին կարգը ճանչնալ. որովհետեւ կ'երեւայ թէ «Տեղեկ. Աստիճ.» այս նկատմամբ բաւական հակասութիւններ կը պարունակէ¹⁹⁰: Իւրաքանչիւր գաւառի համբաւատ եղած զինուորակոչութիւնք կը նշանակուին բառովս indigenae (բնիկք, տեղացի) որ բազմաթիւ հեծելախմբերու կը գործածուի. իսկ promoti (յառաջ մատուցեալք) կը նշանակէ ճիշդ՝ ինչպէս կ'ըսուի¹⁹¹, թէ անոնք լեզէոնական հին հեծելազօրէն ծագած են. բայց նոյն անունը կը տրուի նաեւ իրարմէ շատ տարբեր աստիճանաւ տեսակներու ալ:

¹⁸⁰ Աչքէ չի կրնար վերաբերի որ այս կամ այն Հեծեալք ընծայուած պէտքստ յորջորջանքները կորսնցուցած էին ի հարկի իրենց նշանակութիւնը, որովհետեւ կը միացուին յորջորջանքներ՝ որ պարզ աւելարանութիւն մը կը կազմեն (Dalmatae Illyriciani «Դադամատացիք»՝ Not., Or. XXXII, 24. XXXIII, 25. մատուցիք»՝ Not., Or. XXXV, 15. XXXVII, 16): Եւ ուրիշ ալ կար որ իրարու անմիաբանելի են (Mauri, Illyrion «Մաւրիտանացի Լիւրիկեցիք», Or. XXXII, 18. XXXIII, 26. XXXIV, 21. XXXV, 17. XXXVII, 17):

¹⁹¹ Ռիտաէրլինգ, անդ:

¹⁸⁸ Ի «Hermes», XXIV, p. 207:
¹⁸⁹ Զսիմոս, Ա., 52, 3: